

891.714

8-68

1182

1183


---

1184

1185

---

1186



9 (7) 092 Տրամկիւն

ՖԵՐՊԻՆԱՆԻ ՀՄԻԴԹ

# ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

Գերմաներէնից Թարգմանեց

Փ Ի Լ Ի Պ Պ Ո Ս Վ Ա Ր Դ Ա Ն Ե Ա Ն

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

ՕՐԲԵԼԵԱՆ ՓՁԳՈՑ Ց. 1|2.

1885

1002  
R 6485

1125

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՔԱՀԱՆԱՅ

ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՈՐԳՆԱԿԱՆ ԶՈՒՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Мая 1885 г.  
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

Թարգմանչից

# ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

Ա.

## ԱԶԱԿԵՐՏԸ

Հիւսիսային Ամերիկան, ինչպէս յայտնի է, առաջ Անգլիայի մի գաղթականութիւնն էր, որ բնակիչները բազմանալուց յետոյ Նոր Անգլիա կոչուեցաւ:

Այն տեղ հետեւեալ դէպքն անցաւ 1721 թուականին Բոստօն քաղաքի մի փոքրիկ տղապարանում: Տղաբանի տէրն, որ և մի խմբագիր էր, և սրա հետ մի քանի ուսումնական մարդիկ սեղանի շուրջը նստած, կարդում էին հրատարակութեան համար եկած թղթերը: Նրանցից զատ՝ տղաբանի մէջ ներկայ էր և մի տասնվեց տարեկան գրաշար աշակերտ, որ անհամբեր սպասումէր, թէ երբ կըսկսէին կարգալ իրեն լաւ ծանօթ մի յօդուածը... Ասում ենք

անհամբեր, որովհետև լրագրի համար մի բան գրելու փափագին ընդդիմանալ չկարանալով, նա էլ թաքուն մի շարագրութիւն էր յօրինած, որ այժմ խմբագրական արկղի մէջ էր գտանվում, առանց իւր անունը կրելու:

Կարգը հասնում է նրա յօդուածին և խմբագիրներէց մէկը սկսում է կարդալ դրան բարձր ձայնով: Աշակերտի սիրտը թնդում է: Պարսններից ոչ ոք չէ գուշակում, թէ ինչ էր անցնում այն միջոցին զրաշարի սեղանի մօտ կանգնած պատանու սրտի մէջ և ինչ գոչն էր ստացել նրա երեսն ընթերցմունքի ժամանակ: Պատանին արդէն շատ անգամ տեսած էր, որ լրագրին առաքուած թղթերէց շատերը կարդացուելուց յետոյ սուս ու փուս մոռացութեան գետի մէջ էին ձգվում, որն որ մի արկղի պատկեր ունէր: Այժմ մի շրջիւն, մի խըշխոց է հասնում նրա ականջին—ասես թէ մի մահկանացու թերթ է ընկնում արկղի մէջ, և մի վայրկեան յետոյ պատանու երեսն ու ճակատը յանկարծ կարմրում են: Ի՞նչ էր այս. արդեօք նա ուղիղ լսեց: Պարսններից մին գովումէ շարագրութիւնն և շատ է գովում, միւսը նրան ձայնակցումէ, երբեք նրանց կարծիքը հաստատում: Արդեօք ո՞վ է այս պատուական գործի հեղինակը, ասում են նրանք մէկմէկու, և քս-

ղաքի մէջ համբաւ ունեցող մարդիկները անունն են յիշում մի պատասխան գտնելու համար:

Ո՞վ էր այս աշակերտը, որին որ այդպիսի մեծ երջանկութիւն վիճակուեցաւ այն օր: Բենիամին Ֆրանկլին ամերիկացին էր, որ յետոյ հռչակուելու էր աշխարհի մէջ իբրև մի քաղաքացի, իբրև մի գիտնական, իբրև մի երևելի պետական անձն:

Սակայն տասնվեց տարեկան մի զրաշար ինչպէս կարողացաւ այդպիսի մի փառաւոր յաղթանակ տանել, կհարցնեն ի հարկէ մեր ընթերցողներէց շատերը: Ո՛հ, ընթերցողներն առաւել ևս կգարմանան, երբ լսեն, որ Բենիամինի միւս գիշեր զրաժ երկրորդ շարագրութիւնն էլ նոյն մրցանակը զրաւեց, որ շնորհալի յօդուածագիրը յետոյ էլ շատ գովասանք ստացաւ, բայց իսկական հեղինակը դարձեալ իւր թաքստեան մէջ մնաց—համեստութեան մի բարձր աստիճան, որին միայն քիչերն են հասնում:

Ընթերցողն անշուշտ կ'ուզենայ իմանալ, թէ ինչ էր Բենիամինի յաջողութեան պատճառը—արդեօք նրա հանճարն էր, թէ լաւ դատտիարակութիւնը: Այս հարցմունքին պատասխանելու համար պէտք է նրա մանկութիւնը աչքէ անցնել:

Քենիամինի հայրն, Յողիաս Փրանկլին, կրօնական պատճառներով Անգլիայից Ամերիկա գաղթելու և Քոստօնի մէջ հաստատուելու ստիպուած մի մարդ էր: Անգլիա եղած ժամանակ նա մի մետաքսագործ էր, բայց Ամերիկա դնալուց յետոյ հարկ համարեց մի ուրիշ արհեստ սկսելու, պատճառ որ առաջուանը օգուտ չէր տալիս: Նրա պէս շրջատես, արթուն և ժրջան մարդու համար մի նոր գործ գտնելը դժուար բան չէր. նա սկսաւ օճառ և մոմ շինել, և ուրախութեամբ տեսաւ, որ այս արհեստով էլ կարող էր իւր բազմաթիւ գերդաստան անհրաժեշտ պէտքերը հոգալու միջոց ձարել, թէև շատ համեստ միջոց:

Յողիասի տասներեք զաւակներից ամենափոքրը մեր Քենիամինն էր: Այս տեղ կամենում ենք մի անցք յառաջ բերել սրա մանկութեան օրերից:

«Մի օր, երբ ես դեռ եօթն տարեկան երեխայ էի, պատմումէ նա, բարեկամներս սև փող ընծայեցին ինձ: Ես ուզեցի իսկոյն շուկայ գնալ ինձ մի խաղալիկ գնելու համար. բայց ճանապարհին յանկարծ զմայլած մնացի մի սրինգի հնչմունքից, որ բռնած էր իւր ձեռքում մի ուրիշ երեխայ: Ես մօտեցայ նրան և բոլոր փողս առաջարկեցի, խնդրելով որ սրինգն

ինձ տայ: Այնուհետև զուարթ զուարթ տուն եկայ և ամբողջ տան մէջ սուլմունք հանեցի, ինքս ինձ ուրախանալով և ամենքի զահլան տանելով: Եղբայրներս և քույրերս արած երիտոր իմացան, վրաս ընկան և միաբերան յայտնեցին, թէ չորս անգամ աւելի էի վճարած սրինգիս համար, քան որ կ'արժէր իսկապէս, և սկսան ծիծաղել իմ յիմարութեան վրայ: — Աւրեմն ես կարող էի աւելի լաւ բաներ գնել իմ գումարովս, ասացի ես մտքիս մէջ, և լաց եղայ բարկութիւնից, որովհետև աղբականներիս ծաղրն աւելի էր վշտացնում ինձ, քան թէ սրինգը ուրախացնում: Այս դէպքը մի մնացուց տպաւորութիւն գործեց իմ վրայ և շատ օգուտ բերաւ ինձ վերջերում. պատճառ հենց որ ես մի դատարկ բան գնելու փորձութեան մէջ էի ընկնում, իսկոյն զգուշանալով ասում էի ինքս ինձ. Տես որ սրինգիդ շատ չտանս:»

Մեր Քենիամինի գլխաւոր արժանաւորութիւնն այս էր, որ նա կեանքի փորձերից օգուտ քաղել զիտէր և մի անգամ առած դասին համեմատ ապրելու զօրեղ կամք ունէր:

Մի գրքի մէջ, որ Քենիամին շարադրած էր վերջերում իւր որդու համար, նա երախտագէտ սրտով չիշում է ծնօղներին և նրանց բարքն ու վարքը սպատմելուց յետոյ ասում է, թէ իւր

ամենալաւ յատկութիւնները նրանցից էր ժառանգած:

«Հայրս, ասում է նա, մի միջահասակ, ամրակազմ և սիրուն մարդ էր և ամեն գործերի մէջ վերին աստիճանի յաջողակ: Նա բաւական լաւ նկարել գիտէր, մասամբ էլ ջութակ ածել: Երբ որ նա օրուայ աշխատանքից յետոյ, երեկոյեան, իւր մեղմիկ ձայնով սաղմոս էր երգում ջութակի դաշնակցութեամբ, մենք զմայլած նրան լսում էինք: Արհեստների մէջ էլ վարժ էր նա և ամեն տեսակ գործիք բանեցնել գիտէր: Քաց նրա բոլոր յատկութիւններից ամենաթանգագինը այն մարդկային աւողջ միտքն էր և հիմնաւոր դատողութիւնն, որ ցոյց էր տալիս թէ հասարակային և թէ մասնաւոր կեանքի վերաբերեալ գործերի մէջ: Հասարակային գործերին նա շատ չէր մասնակցում, պատճառ որ բազմաթիւ գերդաստան նիւթական պէտքերը դարմանելու համար սուրբ պաշտօն էր առտնին բաների վրայ հոգ տանել անդադար. այսու ամենայնիւ լիշում եմ, որ շրջակայքի նշանաւոր մարդիկը շուտ շուտ այցելում էին նրան քաղաքի և եկեղեցւոյ կարիքների վերաբերմամբ խորհուրդ հարցնելու համար, և նրա կարծիքներին շատ մեծ արժէք էին տալիս: Մասնաւոր մարդիկ էլ հարկ էին

համարում երբեմն նրա խորհուրդը լսելու իրենց գործերի մասին և շատ անգամ դատաւոր էին ընտրում նրան իրենց վէճերի մէջ: Նա սիրում էր որ իւր սեղանի շուրջը միշտ բարեկամ, բան հասկացող դրացիներ գտանուէին և աշխատում էր շահաւէտ ինդիւրների վրայ զրոյց անել նրանց հետ, որպէս զի իւր որդիքն էլ մի բան ուսանէին և զարգանային: Այս կերպով մենք սովորում էինք ամեն բանի ուշադիր լինելու և լաւ «բարի» սիրելու կեանքի մէջ: Երբէք չէր խօսում նա սեղանի վրայ զրուած կերակուրների մասին և բնաւ չէր ասում, թէ արդեօք դրանք համեղ էին թէ անհամ, լաւ էին եփուած թէ վատ, որն էր ընտիր, որն—ոչ. ուստի ես էլ իմ մանուկ հասակից սովորեցայ խսպառ ուշադրութիւն չընծայելու այդպիսի բաներին և ինձ համար բոլորը մին էր, թէ ինչ տեսակ ուտելիք ունէի առջևս: Մինչև անգամ այս օրս էլ ես այնպէս անտարբեր եմ այդ մասին, որ ճաշից մի քանի ժամ յետոյ շատ դժուարանում եմ միտս բերելու, թէ ինչ էր կերածս և քանի տեսակ: Այս սովորութեանս բուն արժէքը մանաւանդ ճամբորդութեան ժամանակ իմացայ, երբ ուղեկիցներս ինձնից աւելի նուրբ, ուրեմն և դժուար ամօքիլի ճաշակ ունենալով, վերին աստիճանի նեղութիւն էին



կրում, մինչդեռ իմ քեֆը միշտ տեղն էր մընում: Մայրս նմանապէս մի առողջ կին էր և իւր զաւակներին սննդողը միշտ ինքն էր: Չեմ լսած երբէք, որ նա կամ հայրս մի ո՞ր և է հիւանդութեան վրայ զանգատէին, բացի այն հիւանդութիւնից, որով երկուքն էլ վախճանեցան:»

Քենիամին մարմարեայ քարով զարդարեց հանդուցեալ ծնօղների գերեզմանն և փորել տուաւ մի տապանագիր, որի վերջին խօսքերն էին. «Հայրս էր պարկեշտ և խմաստուն, մայրս էր համեստ, առաքինի»:

Քենիամինի ծնօղներն երևի թէ վաղ էին նկատած նրա առանձին հոգեկան շնորհները. որովհետև մինչդեռ նրա միւս եղբայրները սովորաբար ծխական վարժարան էին առաքվում և վերջն արհեստի տրվում, նա արդէն ութ տարեկան հասակին Քոստօնի լատինական դըպրոցի մէջ էր տեղաւորուած: Նրա հօր և մօր փափագն էր մի օր եկեղեցւոյ բեմի վրայ տեսնել իրենց որդուն, այսինքն քահանայ պատրաստել նրան: Քենիամին թէպէտ լաւ էր ուսանում, բայց հայրն իւր դիտաւորութիւնը լաւ կըռելուց չիտոյ տեսաւ, որ նիւթական միջոց չիպիտի ունենար գրան իրադարձելու համար: Այս պատճառով նա հանեց որդուն լատինական

դպրոցից և տարաւ նրան ժողովրդական վարժարան. սակայն մանուկն այս տեղ էլ երկար չմնաց և արդէն տասնամեայ հասակում արհեստաւոր աշակերտ դարձաւ իւր հօր ձեռքի տակ: Քայց նա բնաւ չսիրեց հօր արհեստն և ուզեց նաւաստի դառնայ: Նա չափից դուրս սիրումէր ծովը, որի եղերքին լոյս էր տեսած, որի հոսանքն հաղար անդամ ձեղքած էր բազուկներով, որի վրայ ստեպ որորուած էր թեթև մակուցիով,—և ի սրտէ փափագում էր հեռաւոր օտար աշխարհ մղուիլ նրա այլձուփ կոհակներից: Սակայն հայրը վճռողապէս բնդղիմացաւ այս փափագին: Նրա կարծիքով որդուն նաւաստիների ընկերութեան մէջ ձգելը միևնոյն էր թէ վայրենացնել նրան: Քայց բռնութեամբ էլ մի օր և է գործի դնել չէր ուզում նրան, վախենալով, որ եթէ Քենիամին այդ գործի համար սէր չ'ունենար, գուցէ եղբօր օրինակին կ'հետևէր, որն որ թաքուն մի ուրիշ երկիր էր փախած: Ուստի հայրը զիտութեամբ տանում էր նրան տակառագործների, պղնձագործների, հիւանների և միւս արհեստաւորների մօտ, որպէս զի նա մի պարապմունք բնտրէր իւր համար: Այս թափառումները թէև հօր դիտած նպատակին չհասցրին, այսու ամենայնիւ ապարդիւն չ'անցան Քենիամինի համար: «Այսպիսով

ես այնքան արհեստների հմտացայ, ասում է նա, որ կարող էի յետոյ ինքս իմ ձեռքով և առանց ուրիշների օգնութեան պատրաստել ինձ պէտք եղած գործիները»:

Մինչև այժմ հայրն անտես էր թողած որդու բերմունքներից մին: Արդէն վաղուց Բենիամին մեծ սէր ունէր գրքեր կարդալու: Հօր մատենադարանի գրքերը նա արդէն ծայրէ ի ծայր կարդացել էր և շատ հրապուրուել էր մանաւանդ երկու գրքերից: Սրանք էին Մաթէրի «Բարի գործելու միջոցներ» անուամբ շարադրութիւնն և Պլուտարքոսի «Երևելի անձանց վարքը», որ նա քանի քանի անգամ կարդումէր եռանդուն յափշտակութեամբ և չէր յազննում: Հայրը տեսնելով որդու ջերմ ընթերցասիրութիւնն, և այն, որ նա խնայած մանր ստակով միշտ զանազան գրքեր էր առնում, վերջապէս վերահաս եղաւ նրա կոչմանը և ընտրելիք ճանապարհին: Այս ընտրութիւնը թեթևեցնելու նպատեց և Բենիամինի աւագ եղբայրը, որ Անգլիայից վերադառնալով մի տրպարան էր հիմնած Բոստօնի մէջ: Այնուհետև հայրն այսպէս մտածեց. Որովհետև Բենիամինս այսքան սիրահար է գրքերի, թող ուրեմն գրաշար դառնայ և իւր ուսման տենչը յազնեցնէ. դպրոցները փակ մնացին նրա առջև. ո՞վ

գիտէ, գուցէ առանց վարժարանի էլ նա գիտնական մարդ կդառնայ մի օր:

Բենիամին իսկույն ընդունեց Հօր աւաջարկութիւնը գրաշարի արուեստ ուսանելու մասին, թէև փոքր ինչ տրտմեցաւ, որ եղբոր տպարանի մէջ պիտի աշակերտէր, և հիմք ունէր տրտմելու:

Այս եղբայրը, որի անունն էր Ջէմս, մի անգուլթ և դաժան մարդ էր. ապացոյց, որ նա Բենիամինի մասին Հօր հետ բանակցելիս ինն հարուստ պայման դրաւ եղբոր համար և մի օրինական դաշնագիր պահանջեց նրանից: Այսու ամենայնիւ Բենիամին հնազանդեց Հօր կամքին և յանձն առաւ կատարել պայմանը, ինչքան էլ սա ծանր լինէր: Այս միջոցին նա տասներեք տարեկան էր:

Բենիամին հոգևով չափ սիրեց գրաշարութեան արհեստն և իւր ուշիմ աշխատասիրութեամբ կարճ միջոցում շատ օգտակար հանդիսացաւ Ջէմսին: Բայց սա ընդունակ չէր տեսնելու ինչ որ գուլթի էր և բարի. այլ սովոր էր միայն թերութիւնները դիտելու և ներելի սխալներն անգամ կուպտաբար պատժելու լեզուով և ձեռքով: Եթէ Բենիամին զօրեղ կամքի տէր չլինէր, մի շաբաթ անգամ չէր մնալ եղբոր ձեռքի տակ, բայց համբերելով մնաց, պատ-

ճառ որ իւր բանասիրական ծարաւը յաղեցնելու աղբիւր էր գտած տպարանի մէջ:

Քենիամին բարեկամացաւ զրավաճառ պատանիների հետ և նրանցից լաւ լաւ զրքեր ստանալով, ամբողջ երեկոներ, երբեմն էլ զիշերներ մի բարակ մոմի առջև նստած, կաղզուբում էր իւր սիրտն ու հոգին այս կամ այն ընտիր շարագրութեան վրայ, և հեղինակի հմուտ առաջնորդութեամբ երբեմն մինչև ի առաւօտեան լուրջ թափառում էր մտաւոր աշխարհների մէջ: Ահա լրման էր հասնում նրա ջերմ քաղճանքը. նա նաւարկում էր ողբական կեանքի անհուն ուկիանոսում և «արշալուսի արվուսն մէջ իւր կուրծքը զովացնում», բանաստեղծի ասելով: Այսպէս վայելած ժամերի քաղցրութիւնից նա ժամանակ չէր գտնում երկար մտածելու իւր արտաքին վիճակի դառնութեան վրայ:

Նմանը սիրում է նմանին: Փատթէոս Ագամս անուն մի բարեկիրթ վաճառական, որ միշտ տպարան էր դալիս, զրաւուելով պատանու շնորհալի աչքերից և համակրելի դէմքից, անկեղծ սիրեց նրան և թոյլ տուաւ կարգալիւր հարուստ մատենադարանի զրքերը:

Սակայն կարգալն ու կարգալն, և մանաւանդ առանց մարսելու և անկարգ կարգալը, մի

շատ վնասակար բան է: Որովհետև մեր Քենիամինը չունէր մի կենդանի առաջնորդ, ուստի պարտաւոր էր ինքն իրեն օգնել:

«Իմ բնակած քաղաքիս մէջ, ասում է նա, մի ուրիշ զրասէր երիտասարդ էլ կար Յովհաննէս Կօլլինս անունով, որ մտերիմ բարեկամս էր: Նա և ես ստեպ վիճում էինք զանազան հարցերի վրայ և շատ ախորժում էինք բանակուելից: Ի դէպ է նկատել, որ այս տեսակ վիճասիրութիւնը զիւրաւ կարող է մի շատ վատ սովորութիւն դառնալ, եթէ վիճողը միայն կամակոր և ապերաստն հակաճառութեամբ ճգնի իւր կարծիքը պնդելու:—Մի օր կիների դատարակութեան վրայ վէճ բացուեցաւ մեր մէջ: Խնդիրն այս էր, թէ պէտք էր արդեօք կրթութիւն տալ կիներին և արդեօք ընդունանկ էին նրանք գիտութիւն ուսանելու: Կօլլինս հերքումէր այս և ասումէր, թէ խնդիրը նրանց ընդունակութիւնից շատ բարձր էր. իսկ ես միանգամայն հակառակն էի հաստատում, թերևս միայն պայքարելու տենդից: Կօլլինս ի բնէ ինձնից աւելի ճարտասան էր. բառերը ջրի պէս սահում էին նրա շրթունքից և շատ անգամ ինձ այնպէս էր թուում, թէ ինձ յաղթողն առաւել նրա լեզուանութիւնն էր, քան թէ փաստերի զօրութիւնը: Մենք բաժնուեցանք առանց

1002  
6485

միաբանելու յիշեալ կէտի վրայ. ուստի ես իմ միտքերը թղթի վրայ գրեցի և օրինակը մաքուր արտագրելով նրան ուղարկեցի: Նա պատասխանեց, ես կրկնեցի: Արդէն շատ նամակներ էինք գրած մէկմէկու, երբ որ հայրս մի օր թղթերիս վրայ ընկաւ և գրածներս կարդաց: Նա ինձ բան չասաց բուն խնդրի մասին, միայն թէ ոճս ուղղեց և յայտնեց, որ թէպէտ ես գրաշարական պաշտօնիս շնորհիւ գերազանց էի իմ հակառակորդից ուղղագրութեան և կէտագրութեան մէջ, սակայն շատ ստոր էի նրանից լեզուի գեղեցկութեան և պարզութեան նկատմամբ, և այս բոլորն օրինակներով մեկնեց և հաստատեց: Ես ինքս էլ պարզ տեսայ նրա նկատողութիւնների ճշմարտութիւնն և այնուհետև լեզուիս վրայ առաւել ուշագիւր լինելով, ինքս ինձ խօսք տուի բոլոր ճիգս թափելու, որ իմ ոճը բարւոքի»:

Բենիամին իւր թերութիւնը ճանաչելուց և սրան ուղղելու հաստատ վճիռ սահմանելուց յետոյ սկսաւ մի եղանակ որոնել նպատակին հասնելու համար, և գտաւ: «Այդ միջոցին», գրում է նա, ձեռքս ընկաւ Սպէկտատօր օրագրի մի հատորը. ես քանիցս անգամ կարդացի նրան մեծ դուարձութեամբ և այնքան հաւանեցայ ոճին, որ որոշեցի հետևելու դրան: Այս խոր-

հրդով մի քանի յօդուած ընտրեցի միջից և ամեն մէկի բովանդակութիւնը համառօտ գծագրեցի: Յետոյ աշխատեցայ, առանց զրքի մէջ նայելու, յարմար բառեր գտնել և յօդուածներին իրենց նախկին ձևը տալ, այնպէս բացատրելով իւրաքանչիւրի իմաստը, ինչպէս որ բնագրի մէջ էր: Այնուհետև գրածս «Սպէկտատօրի» հետ համեմատեցի և սխալներս կարելոյն չափ ուղղելիս տեսայ, որ շատ բառեր չգիտէի և գիտցածներս էլ պէտք եղած ըստէին ի կիր առնելու վարժութիւն չունէի: Ինձ թւում էր, թէ այս պակասութիւնից էլ կարող կլինէի աղատուիլ, եթէ ոտանաւոր գրելու սովորութիւնս շարունակէի,— թւում էր թէ ոտեր և յանգեր գտնելու համար հաւասար մտքի, բայց տարբեր երկարութեան և հնչման բառեր որոնելով, շատ հոմանուններ կսովորէի և սրանց արագ գործադրութեան մէջ կմարգուէի: Այսպէս մտածելով, «Սպէկտատօրի» վէպերից մի քանիսն ոտանաւորի դարձրի և ապա, մի որոշ ժամանակից յետոյ, վերստին արձակ ոճի փոխարկեցի, ջանալով, որ մտքերիս կարգն և ձևերիս կերպն բնագրին մօտենար, ինչքան որ հնարին էր: Վերջապէս շաբաթներ անցնելուց յետոյ գրուածներս նորից բնագրի հետ համեմատեցի, և թէպէտ այս անգամ էլ շատ վրիպակներ գտայ,

բայց մի քանի յաջողակ քայլեր էլ նշմարեցի այլ և այլ կտորներին մէջ, որով և քաջալերուեցայ լուսայու, թէ ժամանակով առաւել կրնտեղանամ մայրենի լեզուիս և առաւել մաքուր և հարթ ոճ կ'ունենամ, և այս քիչ բան չէր պատուասիրութեանս համար»:

Յենիամինի եղբայրը մի օր իմացաւ այս բանահիւստութեան փորձերի լուրն և ապապրեց, նրան երկու հատ ոտանաւոր շաքարդրելու: Յենիամին շարադրեց, և առաջին ոտանաւորի մէջ, որի անունն էր «Նաւաբեկութիւն», Վօրթըլակ նաւապետի և նրա աղջկայ ծովակուր լինելն ողբաց. իսկ երկրորդի մէջ Թիկ անուն չար աւագակի բռնուիլը նկարագրեց սարսափելի զոյներով: Յետոյ նա ինքն իւր ձեռքով տպեց այս քերթուածներն, ինքն էլ ստիպուեցաւ վաճառել փողոցների մէջ: Առաջին ոտանաւորը մեծ ընդունելութիւն գտաւ և անօգուտ չմնաց հեղինակի եղբօր քսակի համար: «Այս ոտանաւորներն եղկելի բաներ էին, գրումէ Փրանկլին. բայց այն ժամանակ նրանց ուղիղ գնահատելու ձեռնհաս չլինելով, ես գրեթէ կուրանալու վտանգի մէջ ընկայ անակընկալ յաջողութիւնից: Իմ բազմն էր, որ հայրս օգնութեան հասաւ և քերթուածներին քստմնելի կողմերն աչքիս առջև դնելով, ազատեց ինձ մի թը-

շուառական բանաստեղծ դառնալու վիճակից»:

Չէ թէ բանաստեղծութեան, այլ գործնական իմաստութեան ասպարէզի վրայ շարժելու համար էր կոչուած Յենիամին, և պէտք է գոհ լինել, որ իւր հօր ազդու բացատրութեամբ նա առ միշտ գէն ձգեց ոտանաւոր գրելը:

Յենիամին իւր տասնվեցամեայ հասակում գրտնում է մի զիրք, որ սրամիտ կերպով ճրգնում էր ապացուցանել, թէ մարդուս կանոնաւոր սնունդը բուսեղէն պիտի լինէր: Պատանին, հեղինակի փաստերից համոզուելով, սկսում է մտածել, որ «եթէ մեր ամեն չար ակտերը կենդանիներ սպանելու և ուտելու բարբարոս սովորութիւնից են յառաջ գալիս, ուրեմն պէտք է իսպառ հրաժարուիլ այդ սովորութիւնից»:

Ջէմս մի հարեւանի մօտ էր կերակրում իւր բանուորներին: Յենիամին խնդրեց նրան, որ հարեւանին վճարուելու գումարի կէսն իրեն յանձնուի և թոյլ տրուի, որ իւր սնունդն ինքն հոգայ: Ջէմս յօժարացաւ: «Այս պայմանը, ասումէ Փրանկլին, մի նոր միջոց տուաւ ինձ գրքեր գնելու և մի ուրիշ կողմից էլ օգտակար եղաւ: Հէնց որ եղբայրս և միւս բանուորները հեռանում էին տպարանից կէս օրին, ես միտս էի բերում վերոյիշեալ գրքի պատուէրն և վալելում էի իմ ճաշը, որ լինում էր մի կտոր

Հաց, մի որ և է պտուղ, լուբիայի թան և մի բաժակ ջուր: Եւ այս անում էի ոտքի վրայ կանգնած և ձախ ձեռքումս մի գիրք բռնած»:

Վերոյիշեալ Հեղինակի մտքերը թէպէտ միանգամայն սխալ էին, սակայն և այնպէս մեր պատանին երկար ժամանակ հետևեց նրանց և վնաս չկրեց. ընդհակառակն, իւր խօսքերին նայելով, այս ժուժկալուժեան հետևանքն այն եղաւ, որ նրա խելքը պարզուեցաւ և սրացաւ:

Մի օր Բենիամին դարհուրելով ստուգեց, որ թուաբանութեան մէջ շատ թույլ էր: Նրա դպրոցական ուսումը, որ ինչպէս գիտենք, միայն երկու տարի էր տևել և տասնամեայ հասակին աւարտել, զրեթէ ոչ մի օգուտ չէր տուած նրան այս գիտութեան նկատմամբ: Ուստի պակասը լրացնելու համար նա մի թուաբանութեան ձեռնարկ գնեց և սրա բովանդակութիւնն ինքն իրեն ուսանելուց յետոյ, երկրաչափութիւն էլ ուսաւ Սէլլերի դասադրքով: Նոյն միջոցին նա կարդաց և Լօկի շարադրութիւնը «Յաղագս մարդկային մտաց» և Պօրտո՛ոյալի մի գիրքը, որ կոչվում էր «Մտածելու արուեստ»: Տեսնում ենք, որ ինչքան համեստ էր նրա նիւթական սեղանը, այնքան էլ առատ էր նրա ոգևոր սնունդի պաշարը:

Նա իւր ոճի բարևքման վրայ էլ հսկելու

չէր մոռանում և այս նպատակով գնել էր մի անգլիներէն քերականութիւն, որի վերջաբանի մէջ մի հրահանգ էր տպուած, թէ ինչպէս պէտք էր վիճաբանել Սոկրատէսի եղանակով: Այս եղանակը խորհուրդ չէր տալիս բացարձակ դիմադրելու հակառակորդին, այլ ասումէր, թէ պէտք է շարունակ հարցերով հասցնել նրան այն կէտին, որ նա վերջապէս ինք իրեն ժրետելու և հերքելու ստիպուի:

«Մի քանի տարի հետևեցայ այս մէթօղին, ասում է Փրանկլին. սակայն յետոյ քիչ քիչ թողի նրան և պահպանեցի միայն կասկածի համեստ եղանակով խօսելու կանոնը: Այնուհետև ես չէի գործածում «անտարակոյս», «անշուշտ» և ուրիշ սրանց նման բառեր որոնք կարող էին ցոյց տալ, իբր թէ ես ուզում էի խստիւ յամառիլ մի որ և է կանխակալ մտքի վրայ: Դրանց փոխարէն ասում էի— ըստ իս, կարծեօք, երևի թէ այս ինչ հիմքով այսպէս պիտի լինի, կամ թէ պէտք է որ այսպէս լինի, եթէ չեմ սխալվում: Ինձ թւում է թէ այս սովորութիւնը շատ օգուտ էր բերում ինձ, երբ որ առիթ էի ունենում իմ միտքն ուրիշներին պարզելու և կամ ինձ շահաւէտ երևցող մի խնդիր առաջարկելու ընդունելութեան համար: Եւ որովհետև ամեն մի խօսակցութեան էական

նպատակը մի բան ուսուցանել և ուսանել է, մի հաճելի դրօսանք կամ յորդորակ է, այս պատճառով կցանկայի; որ բարեմիտ և զգաստ մարդիկ ուրիշներին օգտակար լինելու իրենց շնորհը զուր չպակսեցնէին յանդուզն և հատու ոճերով, որոնք զրեթէ միշտ դժգոհութիւն են յարուցանում և հակաճառութեան առիթ տալիս, ի դերև հանելով այն նպատակներն, որոնց դիմելու համար է տրուած մեզ խօսելու ձիրքը»։ Այս իմաստուն գաղափարին գուցէ երբէք չէր հասնիլ Փրանկլին, եթէ վերոյիշեալ գիրքն և նրա կանոնները հիմնովին ուսումնասիրած չըլինէր։

Ընթերցողն այժմ բաւական նիւթ ունի այս զրքի սկզբում գրուած հարցին անձամբ պատասխանելու համար։ Մենք տեսանք մի տասնվեց տարեկան գրաշարի յաղթանակը, որի նմանը գուցէ ամբողջ պատմութեան մէջ հազիւ թէ գտանուի։ Գիտնական մարդիկ գովեստներ կարգացին նամակատուիի մէջ թաքուն գրուած նրա գրութիւններին. մին ասաց — Յօտոսի այս ինչ երևելին է սրանց հեղինակը, միւսն ուրիշ գուշակութիւններ արաւ։ Արդ, ինչ էր այս յաջողութեան պատճառը։— Հանճար։ Սա մի գուհացուցիչ պատասխան չէ։ Ինչքան պատանիներ կան աշխարհումս, որոնք Յինիամինից էլ աւելի

շնորհ են ընդունած ի վերուստ, բայց և այնպէս ոչ մի բանի պէտք չեն գալիս։— Լաւ զըպրօցական կրթութիւն։— Տեսանք, որ վարժարանի դռներն նրա առջև արդէն տասն տարեկան հասակում առ միշտ փակուեցան։— Ընտանիքի փրկարար ազդեցութիւն։— Յարեբախտաբար այս կողմից նրան բան չէր պակասում. սակայն միթէ քիչ են օրինակներ, որ ընտանիքի տմենառատ օրհնութիւնն անգամ ապարդիւն է կորչում գաւակների համար։— Եթէ մեր Յենիամինը Քեֆուիզի գուրկ լինէր, նա էլ այն անդունդի մէջ կմնար, ուր հազար ու հազար մարդիկ են խարխափում անասնական կեանք վարելով, և այս մի բանն էր — սրտի մտօք կատարելութեան դիմելու ազնիւ եռանդ, բարի կամք։

Երիտասարդ ընթերցող, նալիր պատանի Յենիամինի վրայ և չափիր նրանով կամքիդ ուղղութիւնն և ոյժը։ Նայելով թէ ինչպէս է կամքդ, այնպէս էլ կլինի ապառնիդ։ «Կամքն է, որ մարդուս Բժ է շինում կամ Կոթ»։

Բ

Մ Ո Ւ Ո Ր Ա Ն Ք Ը

Մենք, սիրելով երիտասարդ Փրանկլինին, կուզէինք անտես թողնել նրա մի քանի մարդկային սխալանքը. բայց ճշմարտութիւնն առաւել սիրելով, պարտաւոր ենք հաշիւ տալ և դրանց մասին: Բացի այսմանէ մեզ թուումէ, թէ անխոհեմ վարուած կլինէինք, եթէ Փրանկլինի պէս մարդուն միայն մի կողմից ուսումնասիրել ուզենայինք: Այս ազնիւ մարդն երկիւղ չունի ճշմարտութեան լուսից. ուստի վրստահ ենք, որ նա, չնայելով իւր մի քանի մոլորանքներին, միշտ կիմանայ գրաւել իրեն հոգւով համատիպ անձերի սիրտն և բարի զգացմունք զարթեցնել նրանց մէջ:

Սկսում ենք այս հաշիւն առանց դանդաղելու և առաջուց գիտենք, որ սա դժուար չի լինիլ մեզ, պատճառ Փրանկլին արդէն ինքն իւր ձեռքով պարզ լիշատակած է իւր սխալներն, որպէս զի գրանով էլ մի օգուտ տուած լինի ընթերցողին:

Փրանկլին, վերը պատմուած կերպով լրագրի համար յօդուածներ գրելն մի քանի ժամանակ շարունակելուց յետոյ, վերջապէս յայտնեց եղբօրը, թէ ո՞վ էր անձանթ հեղինակը:

Ջէմս, այս իմանալով, թէ և փոխեց կոպիտ վարմունքը, բայց փոքր ինչ յետոյ նորից սկսաւ բռնորէն չարչարել նրան: Բենիամին, այս մասին շատ անգամ հօրը դանդատուեցաւ, բայց անչի ևս չկարանալով համբերել իւր նեղ վիճակին, վճռեց մի ո՞ր և է կերպով ազատուել եղբօր ձեռքից: Բայց ինչպէս ազատուէր. պայմանագիրը ստորագրողն միթէ ինքը չէր:

Այս միջոցին էր, որ Ջէմս Փրանկլին իւր մի յօդուածի համար, որ կառավարութեան դէմ էր ուղղուած, դատաստանի կանչուելով, մի ամիս բանտ նստելու և լրագիրը դադարեցնելու պատիժ ընդունեց: Նրա եղբայրները պատժի այս վերջին մասն ի պերև հանելու մտքով որոշեցին, որ լրագիրն այնուհետև նոր անուամբ լոյս տեսնէ և Բենիամին խմբագիր դառնայ: Սակայն այսպիսի մի որոշում իրագործելու համար նախ պէտք էր, որ Բենիամին դատաստանի դիտութեամբ դադարէր աշակերտ լինելուց և եղբայրն էլ յօժարութիւն տար ջնջելու մեզ յայտնի դաշնագիրը: Ջէմս կատարեց այս, բայց մի և նոյն ժամանակ չուզելով գրկուիլ հին դաշնագրի շահերից, նա յորդորեց եղբօրը ստորագրելու նոյն իմաստով մի ուրիշ աշակերտութեան պայմանագիր, որ սակայն ծածուկ պիտի մնար: Այսպիսի հանգամաքնների մէջ ասես թէ հա-



սարակ հաշիւն անգամ ստիպելու էր Տէմսին, որ նա առաւել տանելի շինէր Բենիամինի կացութիւնն իւր տան մէջ: Սակայն բանտից դուրս գալուն պէս նա դարձեալ նորոգեց իւր նախկին բերտ վարձունքը փոքր եղբօր հետ, և բանն այն տեղ հասաւ, որ մի օր, երբ Տէմս մի ամենաչնչին պատճառով մոլեղնաբար բարկացել էր Բենիամինի վրայ, սա թողաւ տպաբանն և որոշակի յայտնեց, թէ այլ ևս երբէք ոտք չիպիտի կոխէր դրա մէջ: Թէպէտ նոր կնքուած դաշնադիրը բարոյապէս կապումէր Բենիամինին, բայց նա ուշ չդարձրեց այս կէտին և լինուեցաւ միայն այն պարագայի վրայ, որ եղբայրը չիպիտի կարանար դատ սկսելու նրա դէմ, առանց նախապէս ինքն պատժուելու, ուրեմն և անգոր պիտի լինէր մի բան պահանջելու նրանից: Բանն իրաւ այդպէս էր. սակայն արի տես որ Տէմս, չնայելով այս բոլոր գործի ընթացքում ծնօղներին առթած վշտին, իսկոյն հնար գտաւ եղբօրը վնասելու և այնպէս արաւ, որ Բենիամին Բօստօնի տպաբաններին ոչ մէկի մէջ զբաղմունք չգտաւ: «Եթէ այդպէս է, ուրեմն թողնենք Բօստօնը», ասաց դառնացած պատանին, և առանց ծնօղների գիտութեան նաւեց դէպի Նիւ-Յօրկ, ուր յոյս ունէր ձարելու մի օր և է գործ:

Այս ճամբորդութիւնից նա պատմումէ հետեւալ ինքնուրոյն դէպքը...: «Մի օր մեր նաւն օդի հանգարտութեան պատճառով կանգ էր առել և նաւաստիները սկսել էին ձուկ որսալ: Ես դեռ հաւատարիմ էի շնչաւոր էակ չուտելու ուխտիս և հետեւաբար ձուկ բռնելը սպանութիւն էի համարում, պատճառ խեղճ կենդանին սնւ և է վնաս հասցնելու անգոր էր: Սակայն պէտք է ասել, որ ես առաջ սաստիկ ձկնեղէն սիրող էի և երբ մի օր և է տապկած ձկան հոտ էր բուրվում ամանի միջից, ախորժակս և ուխտս շատ նեղն էին ընկնում: Այսու հանդերձ ես համբերում էի. բայց ահա տեսայ մի ձողաձուկ, որ մի ձկնիկ ունէր փորի մէջ: «Այ դու անգղամ, ասացի ես այն ժամանակ. եթէ դու կարող ես ուտել մի ուրիշ ձուկ, ինչո՞ւ ես էլ քեզ չուտեմ»: Սկսեալ այդ օրից Փրանկլին հաշտվում է մտեղէն սնունդի հետ և կնքում է այսպէս. «Տեսնում էք, թէ ինչպէս ձեռնտու է «Բանաւոր» կենդանի լինելն, որ ամեն բանի համար մի հաւանական պատճառ հնարել զիտէ»:

Նա յաջողութեամբ հասնումէ իւր ծնրն-դավայրից երեք հարիւր անգլիական մղոն տարակալ Նիւ-Յօրկ քաղաքը, բայց ոչ մի պաշտօն չէ գտնում այն տեղ բնակող միակ տպա-

գրի մօտ. տպագիրը խորհուրդ է տալիս նրան նաւելու Ֆիլադէլֆիա, ուր գուցէ իւր որդին, որ նոյնպէս մի տպարանի տէր էր, կարող կլինէր մի զբաղմունք ճարելու նրա համար: Բենիամին, ծովաչին ուղևորութեան ժամանակ յորջ անձրևի և վտանգաւոր պիկոճութեան ենթարկուելուց յետոյ, վերջապէս գալիս է Ֆիլադէլֆիա: Նա այսպէս է նկարագրում իւր առաջին գալուստն այն տեղ.

«Ես մտայ քաղաք բանուորի շորերով, իսկ շորերս յետոյ պիտի հասնէին: Այս բանուորի հագուստս աղոտտ էր և զրպաններս լիքն էին հին շապիկներով և գուլպաներով: Ամբողջ քաղաքի մէջ ես ոչ մի ծանօթ չունէի և չէի էլ իմանում, թէ որտեղ մի օթւեան պիտի գտնէի: Բոլոր գիշերը, լոյսէ լոյս օգնած լինելով նաւաստիներին առանց մի բան ուտելու, յետոյ էլ բաւական երկար ժամանակ ման եկած լինելով, ես վերջապէս մի անտանելի յոգնութիւն և սով զգացի: Իմ բոլոր հարստութիւնս մի հոլլանդական թալէր էր և մի շիլլինգ: Չիլլինգը տուի նաւապետին. նա չէր ուզում ճանապարհի գին ընդունել ինձնից, որովհետև ես թիավարելու օգնած էի. բայց ես պնդեցի, և նա վերջապէս ընդունեց: Երբեմն մարդս քիչ փողով աւելի առատաձեռն է լինում, քան թէ

շատով, պատճառ այդպիսով իւր չքաւորութիւնն ուզում է թաքցնել:—Աչքերս դէս ու դէն շրջելով, մտայ մի փողոց, ուր մի տղայ տեսայ, ձեռքին մի բոմբի բռնած: Հարցրի, թէ որտեղ էր գնել և շիտակ գնացի նրա ցոյց տուած փուռը: Ուզեցած բոմբիս չկար այն տեղ. ուստի մի սպիտակ բլիթ խնդրեցի երեք պէնսի. բայց այդ էլ չկար: Վերջապէս պահանջեցի, որ ինչ տեսակ հաց էլ լինի տան ինձ երեք պէնսի, և ստացայ երեք հատ ահագին նկանակ: Զարմանալով այս էփանութեան վրայ, նկանակներից մին մի թւելիս տակ դրի, միւսը միւս թւելիս տակ, երրորդն էլ ուտելով, վերադարձայ դէպի նաւը ջուր խմելու համար: Երբ որ կերայ հացերից մին և վրայից էլ ջուր խմելով լիովին կշտացայ, միւս երկու նկանակներս տուի մի կնոջ և նրա որդուն, որոնք մեզ հետ էին եկած նաւով և առաւել հեռու պիտի նաւարկէին: Այսպէս ոյժ առնելուց յետոյ ես նորից մտայ փողոց, որ այժմ լիքն էր վայելուչ հագնուած մարդիկներով: Սրանք բոլորն էլ մի և նոյն ուղղութեամբ էին գնում: Ես էլ մտայ բազմութեան մէջ և նրանց ճանապարհը բռնելով, հասայ վերջապէս կուաքէրների ժողովարանը, որ հրապարակի վրայ էր գտանվում: Այս տեղ ես էլ ուրիշների նման մի տեղ բռ-

նեցի և բաւական ժամանակ չորս կողմ նայելուցս լետոյ, երբ տեսայ, որ ոչ ոք ինձ մի բան չէր ասում, յօգնութիւնից և տաղտուկից մի այնպիսի առողջ և անուշ քունի մէջ ընկայ, որ ժողովի վերջանալն անգամ չէի լսիլ, եթէ յուշիկ մշտելով չդարձեցնէր ինձ մի բարեսիրտ մարդ: Հետեւաբար կուսքէրների տաճարն էր այն տունը, ուր որ ես առաջին անգամ ոտք դրի և ննջեցի Ֆիլադելֆիայի մէջ»:

Տպարանի տէրը, որին որ Բենիամին յանձնարարուած էր, չկարացաւ ինքն մի դորձ տալ նրան, բայց բարեկամացրեց իւր Քայմէր անուն ընկերի հետ, որ և վերջապէս գտաւ նրա համար մի պարապմունք, թէպէտ և շատ փոքր ռոճկով: Այս միջոցին Բենիամին իւր սնդուկն էլ ստացաւ և մաքուր շորեր հագնելով մտաւ մի քանի գրասէր երիտասարդների ընկերութեան մէջ, որոնց հետ բաւական հաճելի ժամեր էր անցկացնում: Նոյն ժամանակ նա ծանօթացաւ և մի պարկեշտ նորատի օրիորդի հետ, որի անունն էր Ռիթ, և սրա աջը խընդրելու փափագ զգաց իւր սրտի մէջ: Բենիամին առաջուայ պէս չափաւոր և շատ աշխատասէր կեանք էր վարում. ուստի փոքր ժամանակից լետոյ մի քանի կտոր ոսկու տէր դարձաւ և բնաւ նեղութիւն չկրեց օտարութեան մէջ: Յա-

ւալի է միայն, որ նա այս միջոցին հօր տունը չէր լիշոււմ և ծնօղներին մի լուր անգամ չէր տալիս: Ռոբերթ Հօլմ, նրա ազգականներից մին, որ մի առևտրական նաւի տէր էր, առաջինն իմացաւ, որ Բենիամին Ֆիլադելֆիա էր. նա մի նամակով լիշեցրեց Բենիամինին ծնօղների և եղբօր դէմ տրած անիրաւութիւնն և յորդորեց որ տուն վերագաւնայ: Փրանկլին անմիջապէս պատասխան գրեց Հօլմին, թէ ափսոսում էր, որ նրա խնդիրն չիպիտի կարանար կատարել, և մանրամասն նկարագրեց, ինչ որ պատահել էր իւր և եղբօր մէջ: Ազգականն ընդունեց Բենիամինի գրութիւնը Նիւ-Կասթլում, հենց նոյն րոպէին, երբ որ նստած էր Սիւր Վիլլիամ Քայթ անուն գաւառապետի մօտ: Նամակի միտքը թէև բացասական էր, բայց ոճի և տրամախոհութեան մի սիրուն տիպար լինելուն համար այնպիսի մի լաւ տպաւորութիւն գործեց Հօլմի վրայ, որ սա իսկոյն շտապեց ցոյց տալ նամակը գաւառապետին, որ նոյնպէս շատ դու՛ մնաց դրանից: Գաւառապետն առաւել ևս զարմացաւ Բենիամինի քանքարի վրայ, երբ իմացաւ նրա տասնութ տարեկան լինելն, և յայտնելով, թէ պէտք էր անշուշտ մի օգնութիւն հասցնել այնպիսի մի ընդունակ պատանու, նա վճռեց անձամբ նպաստել նրան մի տպարան

Հիմնելու և օգնել, ինչքան որ կարանար: Բենիամին բնաւ տեղեկութիւն չունէր այս անցքի վրայ, պատճառ Հօլմ յետոյ պիտի հաղորդէր նրան, ինչ որ մենք վերը պատմեցինք. սակայն անցքի հետեւանքը նա իսկոյն զգալու էր: Զատ չանչաճ, մի օր, այն ինչ Բենիամին և Քայմէր պատուհանի առջև աշխատելու վրայ էին, յանկարծ տեսան, որ գաւառապետն և Փրէնկ անուն մի աստիճանաւոր, համազգեստ հագած, փողոցից անցնելով, ուղիղ իրենց տպարանին էին մօտենում: Քայմէր կարծեց, թէ այցելուներն իրեն էին ուզում տեսնել և գուցէ ապսպրելու մի բան ունէին. ուստի շտապով վայր վազեց և բաց արաւ դռները Հիւրերի առջև: Գաւառապետը Փրանկլինի մասին հարցրեց, նրա սենեակը մտաւ, հետը մտերմաբար խօսեց և վերջապէս հրաւիրեց, որ մի բաժակ զինի ըմպելու գայ իւր հետ: Փրանկլին, վսեմաշուք պարօնի ղիջողութեան և սիրելութեան վրայ ապշած, նոր շորեր հագաւ և ամենքն էլ միասին գնացին զինետուն: Այս տեղ գաւառապետը, մագէրա զինու բաժակն առջևն դրած, խորհուրդ տուաւ Փրանկլինին, որ սա մի տպարան հիմնէ նրա բնակած քաղաքի մէջ, և ասաց, որ պատրաստ էր բոլոր գաւառի տպագրելի նիւթերն հենց այժմէն սլոգ տպարանին ապա-

հովացնել: Երբ որ Փրանկլին նկատեց, թէ յոյս չունէր տպարանի Հիմնարկութեան համար կարելու միջոց ստանալու հօրից, մանաւանդ որ իւր ծածուկ փախուստովն էլ վշտացրած նրան, գաւառապետը քաջալերեց Փրանկլինին, ասելով, թէ ինքն անձամբ պատրաստ էր մի նամակ գրել հօրը և պարզել նրան, թէ ձեռնարկելի գործի օգուտներն ակներև էին:

Այս տեսակցութիւնից յետոյ Փրանկլին ճանապարհ ընկաւ դէպի հօր տունը: Հայրն ուրախութեամբ ընդունեց նրան, սակայն վերոյիշեալ գործին յօժարութիւն չտուաւ. նա շնորհակալութիւն յայտնելով գաւառապետին որդուն ընծայած բարեկամութեան համար, դրում էր նրան, թէ անկարող էր, իրբև մի բազմութիւ ղերդաստան հայր, յանձնել որդուն տպարանի բացման ծախքը, մանաւանդ որ այդ որդին, տասնութ տարեկան լինելով, դեռ մի անփորձ պատանի էր:

Փրանկլին չէր ուզում եղբօրը մի այցելութիւն չարած հեռանալ հայրենի տանից: «Այս պատճառով ես տպարան գնացի, գրում է նա. այժմ ես առաւել վայելուչ էի հազնուած, քան թէ առաջ, երբ նրա մօտ էի ծառայում. վրաս մի ժամացոյց էր կախուած, քսակիս մէջ էլ գրեթէ հինգ սթերլինգի չափ դրամ կար: Եղ-

բայրս շատ քաղաքավար չընդունեց ինձ, բայց չափեց ինձ ոտքիցս մինչև գլուխ և հանդարտ շարունակեց իւր գործը: Քանուորները շրջապատեցին ինձ և սկսան հարցնել, թէ որտեղ էի մինչև այժմ և ինչ երկիրներ էի տեսած: Ես էլ, նրանց հարցերին պատասխան տալով, չափից դուրս գովեցի Ֆիլադէլֆիան, փառաբանեցի այն տեղի երջանիկ կեանքն և ասացի, թէ նորից այն տեղ պիտի վերադառնամ: Քանուորներից մին կամենում էր իմանալ, թէ ինչպէս էին այնտեղի դրամները: Ես խսկոյն մի բուռն արծաթ հանեցի իմ գրպանից և ցոյց տուի. այս մի չտեսնուած բան էր նրանց համար, որովհետև թոստոնի սովորական դրամը թղթի էր: Այնուհետև դանց չարի ժամացոյցս էլ լերևան հանելու. բայց տեսնելով, որ եղբայրս չարանում էր, մի սթերլինգ պարզեցի բանուորներին և շտապով դուրս ելայ տպարանից: Եղբայրս շատ բարկացաւ այցելութեանս վրայ, և երբ մեր մայրը կամենում էր վերստին հաշտեցնել մեզ, Ջէմս պատասխանեց, թէ ես այն աստիճանի վերաւորած էի նրան իւր գործաւորների առջև, որ նա երբէք չիպիտի կարանար այդ մոռանալու և ինձ հետ հաշտուելու. սակայն նա սխալվում էր այս կտորում»:

Տան բարեկամներն զուր էին աշխատում

փոխել տալու հօր միտքը: Ծերունին ասում էր, թէ լիմարութիւն էր մի համբակի ձեռքով այնպիսի մեծ գործ սկսելը: «Թող այլ ևս երեք տարի զարգանայ և ապա թէ գայ հետս գործի վրայ խօսելու», պնդում էր նա: Բայց և այնպէս նա շատ ուրախ էր, որ Յենիամին գեղեցիկ հասակ էր առած և գաւառապետի պէս մարդու հետ էլ բարեկամ էր: «Չարունակիւր աշխատել, սրգեակ, ասաց նա վերջին անգամ. այսպիսով դուցէ դու ինքդ, առանց ուրիշի օգնութեան, կարող կլինիս մի տպարան հաստատելու փոքր ինչ յետոյ»:

Եւ այսպէս Ֆրանկլին իւր նպատակին չհասած վերադարձաւ դէպի լետ. սակայն սիրտը թեթեւ էր, որովհետև այս անգամ ծնողական օրհնութեամբ էր մեկնում հայրենի տանից:

Ճանապարհին նրա նստած նաւը խաբիսի ձգեց Նիւ-Պորթի առջև և Ֆրանկլին այցելութիւն արաւ այն տեղ բնակող մի եղբօրը, որ և զգուանքով ընդունեց նրան իւր տան մէջ: Այս եղբօր բարեկամներից մին, Ալէքոն անունով մի մարդ, իմանալով որ Ֆրանկլին Ֆիլադէլֆիա պիտի գնար, լանձնեց նրան մի մուրհակ և խնդրեց, որ ստանայ Ֆիլադէլֆիայում դրա գորութեամբ իրեն վճարելիք 36 ֆունտ սթերլինգի պարտքն և իւր մօտ պահէ, մինչև

որ պատուէր ստանայ այս գումարն Նիւ-  
Պօրթ ուղարկելու: Բենիամին յօժարութեամբ  
յանձն առաւ կատարել եղբօր բարեկամի խնդիրը:

Նիւ-Յօրկում Բենիամին պատահեցաւ իւր  
նախկին բարեկամ Կօլլինսին, որի հետ երբեմն  
սիրում էր վիճաբանել և որ այն ժամանակ  
զարգացմամբ և ճարպիկութեամբ իրենից բարձր  
էր: Կօլլինս ուզում էր նույնպէս Ֆիլադէլֆիա  
գնալ իւր բախտը փորձելու և միացաւ Փրանկ-  
լինին, որ մինչև այժմս էլ ջերմ սիրտ էր պա-  
հած իւր մանկութեան ընկերի համար: Փրանկ-  
լին իմանալով ճանապարհի վրայ, որ Կօլլինս  
բոլորովին փող չունէր և միայն իւր բարեկամի  
քսակին ապաւինելով էր ուղևորել, իսկոյն օգ-  
նութիւն առաջարկեց նրան. սակայն վատն  
այս էր, որ ընկերին տալու փողն այն գու-  
մարից հանեց, որի վրայ միայն Վէրօն կարող  
էր իշխանութիւն բանեցնել: Փրանկլին իւր  
ընկերի մէկ բանին շատ չհաւանեց—Կօլլինս,  
առևտրական գործավարութեամբ տեղէ տեղ թա-  
փառելիս, խմբիքի էր սովորած: Նա չկարացաւ  
զբաղմունք ճարել Ֆիլադէլֆիայում, զուցէ այն  
պատճառով, որ իւր կարմրած գէմքն և ոգելից  
շունչն արդէն իսկոյն մատնում էին նրան. և  
այսպէս նա օրեր ու շաբաթներ Փրանկլինի  
զրպանից էր ապրում, ի չար գործածելով նրա

բարեսրտութիւնը. ուստի և Վէրօնին պատկա-  
նած գումարի թիւն օրէ օր պակսում էր և  
Փրանկլին չէր իմանում, թէ ինչ պիտի անէր,  
եթէ նա յանկարծ յետ պահանջեր իւր արծաթը:

Փրանկլին Ֆիլադէլֆիա հասնելուն պէս  
յայտնեց դաւառապետին, ինչ որ լսել էր հօ-  
րից: «Որովհետև նա չէ ուզում քեզ օգնել, դէհ  
ուրեմն էս կ'օգնեմ քեզ», ասաց դաւառապետը:

Այդ շատ լաւ խօսքեր էին. բայց դժբախ-  
տաբար դաւառապետն այն մարդիկներից էր,  
որոնք թէև շատ բան են խոստանում բարե-  
սրտութեամբ, սակայն չեն մտածում, թէ կա-  
րող են արդեօք խոստմունքը կատարել:

«Ես ձեզ փող էլ կտամ, նամակներ էլ  
կտամ», ասաց նա Փրանկլինին. «գնացէք Անգ-  
լիա և բերէք այն տեղից, ինչ որ պէտք է  
տպարանի համար: Գնելու իրերը մասամբ փո-  
ղով կ'առնէք, մասամբ էլ նամակներիս գօրու-  
թեամբ, պարտքը յետոյ կվճարենք»:

Բենիամին ճանապարհ ընկնելուց առաջ  
կամենում էր ամուսնանալ չքնաղ Քիթ օրիորդի  
հետ. բայց օրիորդի մայրն, Բենիամինի հօր  
պէս մտածելով, ասաց, թէ տասնութ տարե-  
կան մի երիտասարդի գեռ շատ վաղ էր ամուս-  
նանալ, և որոշեց, որ պսակը մինչև նրա վե-  
րագառնալն և տպարանի հիմնուելը յետ ձգուէր:

Բենիամին ստիպուած էր Հնազանդել. ահու-  
հետեւ նա խօսք տուաւ օրիորդին և ճանապարհ  
ընկաւ դէպի Լօնդօն:

Գաւառապետի ինչ տեսակ մարդ լինելն  
Փրանկլին Լօնդօնի մէջ իմացաւ իսկապէս: Նա  
նամակներ ունէր գաւառապետից, իսկ դրամը  
յետոյ պիտի գար դրա խոստմամբ. բայց  
դրամը չ'եկաւ, նամակներն էլ ոչ մի օգուտ չը  
տուին: Ապրանք գնելու տեղ, Բենիամին այժմ  
հարկադրուած էր մի գործ սրոնել, որ օրուա՛  
հացի կարօտ չմնար: Նա գնում է Պալմէրի  
տպարանը, որ Լօնդօնի մէջ նշանաւորներից  
մէկն էր, և ընդունվում է այն տեղ: Երկար  
ժամանակ Պալմէրի մօտ աշխատելուց յետոյ, մի  
առաւել լաւ պաշտօն է ստանում Վաթսօնի  
տպարանի մէջ, ուր գրեթէ յիսնի չափ գործա-  
ւոր կային: Երբ սրանք տեսան, որ Փրանկլին  
միայն ջուր էր խմում, «ամերիկացի ջրամարդ»  
անուանեցին նրան և բնաւ չէին ուզում են-  
թագրել, թէ նրա ջիղերի մէջ էլ կարող էր գօ-  
րութիւն գտանուիլ: Այս պատճառով մեծ եղաւ  
նրանց զարմանքը, երբ տեսան, որ Փրանկլին  
իւրաքանչիւր ձեռում մի մի ձև բռնած սան-  
դուղների վրայ էր բարձրանում, մինչդեռ իրենք  
մի ձև անգամ վերցնելու համար երկու ձեռքի  
էլ կարօտ էին:

«Իմ արհեստակիցն մամուլի վրայ, ասում  
է Փրանկլին, ամեն օր մի բաժակ գարեջուր էր  
պարսպում նախաճաշից առաջ, մի բաժակ նախ  
քան ճաշը, մէկն էլ ճաշին, մէկն էլ երեկոյ-  
եան վեց ժամին, վերջապէս մէկն էլ ընթրիքի  
ժամանակ: Այս սովորութիւնը զգուելի երևցաւ  
ինձ. իսկ նա պնդում էր, թէ այս բոլոր գարե-  
ջուրն անշուշտ հարկաւոր էր նրան, աշխատե-  
լու ոյժը չկորցնելու համար: Ես ձգնում էի բա-  
ցատրել, թէ գարեջրի տուած Ֆիզիքական գօ-  
րութիւնը միայն գարիի ամուր մասերից էր  
չառաջ գալիս, որոնք ջրի մէջ լուծուելով գա-  
րեջուր էին գոյացնում, և թէ մի պէնիանոց  
հացի մէջ աւելի շատ ալիւր կար և թէ ուրեմն  
նա աւելի ոյժ կստանար այս հացն ուտելով,  
վրայից էլ մի բաժակ ջուր խմելով, քան թէ  
մի կուժ գարեջրից: Սակայն գործաւորն առանց  
ուշք գարձնելու իմ փաստաբանութեան, գար-  
ձեալ շարունակում էր իւր վատ սովորութիւնն  
և ամեն շաբաթ օր վատնում էր գարեջրի հա-  
մար չորս կամ հինգ շիլլինգ: Սրա պէս էին  
ապրում և միւս ողորմելիները, մինչև ի մահ  
կարօտութեան և տառապանքի մատնելով ի-  
րենց կեանքը»:

Փրանկլին իւր չարատեւ ջանասիրութեամբ  
և մանաւանդ գրաշարութեան մէջ ցոյց տուած

յաջողակութեամբ այն աստիճանի գրաւել էր տպարանի տիրոջ սէրն, որ սա բոլոր շտապողական գործերը, որոնք և սովորաբար առաւել թանգ էին վարձատրվում, նրան յանձնեց: Ինչպէս որ առաջ Կօլլինս, այնպէս էլ այժմ Ռալֆ անուն մի մարդ շատ տաղտուկ էր պատճառում Փրանկլինին: Այս մարդը միշտ պարտք էր առնում նրանից, բնաւ առանց փոյթ տանելու հատուցման մասին, և պարտական էր նրան արդէն շէ ֆունտ սթէրլինգ: Մի օր Ռալֆ կորչում է Լօնդօնից մի ուրիշ տեղ պաշտօն որոնելու համար, և Փրանկլին օգնում է նրա թողուած ամուսնին գուցէ առաւել, քան որ կարող էր: Ռալֆ տուն վերադառնալով, փոխանակ շնորհակալութեան, սկսում է հայհոյել Փրանկլինին և բացարձակ յայտնում է, թէ պարտքից ազատ է համարում իւր անձն, և ոչինչ չէ վճարում: Եւ իրաւ Փրանկլինի փողը կորչում է:

Սակայն ինչ դրութեան մէջ էին նրա յարաբերութիւնները Ռիթ օրիորդի հետ: Այս օրիորդը նրա վերադարձին գուր սպասելուց լետոյ, տեսնելով, որ նա մի տարիից աւելի ոչ մի նամակ չէր գրում իրեն, կարծում է թէ արդէն մոռացուել է Փրանկլինից: Նոյն միջոցին մի ուրիշ մարդ է խնդրում նրա աջն և Ռիթ, մօր

խօսքին լսելով, յօժարութիւն է տալիս և պատկուծ է այս մարդու հետ:

Փրանկլին արդէն գրեթէ մի տարի ու կէս է որ Լօնդօն էր և իւր արհեստի մէջ բաւական յառաջ էր գնացել: Այժմս էլ նա երեկոցեան պարապոյ ժամերն ընտիր ընտիր գրքերի ընթերցանութեան էր նուիրում և կամ ուսումնասէր երիտասարդների ընկերութեան մէջ անցկացնում: Մի օր նա ծանօթանում է Գէնհամ անուն մի վաճառականի հետ և սա սիրելով նրան, խնդրում է, որ Փրանկլին գործավարի պաշտօն ընդունէ իւր մօտ: Գէնհամ մի ազնիւ և ժրաջան վաճառական էր և մտադիր էր մեծագին ապրանքի պաշար տանել Ֆիլադէլֆիա. նա լաւ ռոճկից գատ, որ տալու էր Փրանկլինին, խոստանում էր նոյնպէս օգնել նրան մի օր ինքնազլուի վաճառական դառնալու: Փրանկլին այս գործի վրայ գրած յոյսերից և վերջպէս հայրենիքը տեսնելու կարօտից գրգուելով, յանձն առաւ Գէնհամի առաջարկութիւնն և հրաժեշտ տուաւ իւր առաջուայ պաշտօնին:

Բայց մի ուրիշ հրաժեշտ էլ տուաւ նա այդ միջոցին: Նա իւր աչցեալ արարմունքը դիտելիս պարզ տեսնում էր, որ չէր կարող խղճի հաւանութիւն շնորհել գրանցից ամեն մէկին. նոյնպէս էլ ծանօթ երիտասարդների



վրայ մտածելիս, մինչդեռ ստիպվում էր յարգել մի քանիսի սկզբունքը, ատում էր միւսներինը, որոնք անարդ էին թւում իւր աչքին: Նա որոշեց այն օրից արդարութեան և հաւատարմութեան ճանապարհն բռնել, և մենք դեռ առիթ կ'ունենանք տեսնելու, որ նա իբրև մի ազնիւ մարդ, իշաւ հաստատ մնաց այս ուխտի վրայ: Այսպէս ահա անցաւ նրա սխալանքների ժամանակը:

Գ

### ՎԵՐԱԹԵՒՈՒՄՆ

Գեղեցիկ և իմաստուն կերպով է նկարագրում Մինիէն այն, ինչ որ զբաղեցնում էր այդ միջոցին Փրանկլինի միտքը: «Տիգերքն, ասում է նա, օրէնքների մի ներդաշնակութիւն է: Սկսեալ միլլիօնաւոր տարիներէ ի վեր ծանրութեան օրէնքով անհուն տարածութեան մէջ շրջող և ամեն բանի գերագոյն Արարչից ընդունած հզօր դարկին և ձգողական զօրութեան հետևող աստղերից, մինչև տերևների վրայ երբ-բայով ըսպէական կեանք վարող միջատները— ամեն մարմին, ամեն էակ հնազանդում է մի

հաստատուն և որոշ օրէնքի: Այո, Աստուծոյ խորագէտ իմաստութեամբ սահմանուած, նրա բարութեամբ ի գործ դրուած և նրա արդարութեամբ պահպանուած սքանչելահրաշ օրէնքներն են, որ ամենախտարեալ շարժողութիւն են յառաջ բերում, բազմադիմի կեանք են ծաւալում և դաշնակաւոր կարգ են հաստատում տիեզերքի մէջ: Մարդս, բոլոր էակներից ամենաբաղադրեալն և վսեմագոյնը, որ այս օրէնքների ներքև է կանգնած և ոչ թէ վրան, որ միայն մտքով կարող է ըմբռնել դրանց, բայց փոխելու անզօր,—մարդս իմացութեան հոյակապ ձիրքը, ազատութեան ղեղեցիկ իրաւունքն և արդարութեան երկնային զգացմունքն ունի իւր մէջ: Նա, իբրև մի բանաւոր արարած, պէտք է որ ճանաչէ տիեզերքի օրէնքը. իբրև արդարութիւն զգացող, պէտք է որ հնազանդի դրանց և իբրև ազատ՝ պէտք է որ պատիժ ընդունէ, եթէ խտորի այդ օրէնքներից. նա չէ կարող խանգարել դրանց ոչ Ֆիզիքական, ոչ էլ բարոյական սահմանների մէջ, առանց պատիժ կրելու իւր տղիտութեան և կամ մոլորութեան փոխարէն: Առողջութիւն և հիւանդութիւն, երջանկութիւն և տառապանք, խնդութիւն և վիշտ—այս բոլորը կախուած է կամ այն փոյթեռանդ ջանքից, որով նա հետևում է վերո-

յիշեալ օրէնքներին, և կամ այն վտանգաւոր և անփոյթ յամառութիւնից, որով մեղանջում է նրանց դէմ:

Փրանկլին այս բոլորը հասկացել էր: Նա տեսնելով աշխարհիս կարգը, ամբարձել էր դէպի սրա Արարիչն, ճանաչել էր Աստուծուն և հաստատուն կայան էր տուել նրան իւր սրտի մէջ: Գիտելով ոգու և նիւթի տարբեր բնութիւնները, անբաժանելի ոգին և անցաւոր նիւթը, եզրափակել էր, ինչպէս որ անում են բոլոր ազգերն և կրօնները, — թէ անմահական է մարդուս հոգին: Տեսնելով կարգի անհրաժեշտութիւնը տիեզերքի մէջ և մարդուս ընդունակութիւնն արդարութեան համար, հետևեցրել էր, որ բարի գործը՝ վարձք և չարը՝ պատիժ պիտի ստանայ այս կամ հանդերձեալ կեանքում: Աստուծոյ գոյութիւնը, հոգու անմահութիւնը, մարդկային գործերի վարձատրութիւնը, թէ որ սրանք բարոյական լինէին, և պատիժը, եթէ բարոյականին հակառակ լինէին, — ճշմարիտ հաւատի հիմք էին դարձել Փրանկլինի համար, և այսպէս նրա աչքում բնական հաւատը յայտնեալ հաւատի ստուգութիւն ստանալով, նա յօրինել էր իւր համար մի փոքրիկ աղօթագիրք կամ Աստուածալաշտութեան ձեռնարկ»:

Մինչև այժմ Փրանկլին իւր զիտութեան

պաշարն ընդարձակելու և արհեստի մէջ ըստ կարելոյն մարդուելու փոյթ էր տանում. հիմա նա մի բարոյական կեանքի ձգտելու, իւր թութութիւններն ուղղելու, բարի սովորութիւնների մէջ ինքն իրեն ամրացնելու և առաքինի կեանք վարելու որոշում տեսաւ: Այս նպատակով նա շինեց բարի յատկութիւնների մի ցուցակ, որ յառաջ ենք բերում այս տեղ նրա ծանօթութիւններով հանդերձ.

1. Ժուժկալութիւն: Մի ուտիր այնքան, որ անասուն դառնաս, այնքան էլ մի խմիր, որ գլուխդ բորբոքուի:

2. Առութիւն: Միայն այն խօսիր, ինչ որ քեզ և ուրիշներին օգտել կարող էր:

3. Կարգապահութիւն: Ամեն մի բանի որոշ տեղ տուր, ամեն մի գործիդ որոշ ժամանակ:

4. Վճռականութիւն: Վճռիր կատարել, ինչ որ անելու ես. և կատարիր, ինչ որ վրձուած ես:

5. Սակաւապետութիւն: Անօգուտ ծախք մի անիր ոչ քեզ, ոչ էլ ուրիշների համար, ասել է թէ մի լինիր վատնող:

6. Զանաւորութիւն: Ժամանակդ երբէք մի կորցնիր, միշտ օգտաւէտ գործով պարապիր. արա՛, ինչ որ միայն կարեւոր է:

7. Անկեղծութիւն: Մի ընտրիր խոտորնակ

ճանապարհներ և փոյթ տար, որ միայն անկեղծութիւնն և սրբգութիւնը միտքերիդ առաջնորդ լինին:

8. Արդարութիւն: Այ ոքի դէմ անիրաւութիւն մի գործիր և արա ուրիշներին, ինչ որ նրանք իրաւունք ունին քեզնից սպասելու:

9. Երկայնամտութիւն: Զգուշ կայ ծայրայեղութիւնից և վրէժխնդիր մի լինիր քեզ վերաւորողներից, թէպէտ և կարծէիր, թէ նրանք արժանի են դրան:

10. Մաքրասիրութիւն: Այ մարմնիդ վրայ կեղտ համբերիր, ոչ շորերիդ վրայ, ոչ էլ բնակարանիդ մէջ:

11. Անդորրութիւն: Չնչին կամ սովորական և անխուսափելի պատահարներից մի վրդովուիր, մի գայրանար:

12. Կուտութիւն: Անբիժ և մաքուր կեանք վարիր, որպէս զի ոչ քո հանգստութիւնն և բարի համբաւը վնասուի, ոչ էլ ուրիշներ:

13. Խոնարհութիւն: Նմանիր Յիսուսին և Սոկրատէսին:

Այս կանոնների դասաւորութեան մէջ անգամ մի որոշ կարգ էր դրած Փրանկլին «ժուժկալութիւնն ամենից վեր դասեցի, ասում է նա. պատճառ որ մարդուս գլուխը սառ և մըտքերն ազատ է պահում. սա մի անհրաժեշտ

քան է, եթէ կամենանք միշտ հսկել մեզ վրայ, միշտ արթուն մնալ և միշտ պատերազմել հին սովորութիւնների և փորձութեան հրապոյրների դէմ, որոնք անդադար հալածում են մեզ: Այս առաքինութեան մէջ մի անգամ զօրանալուցս յետոյ լուսնը առաւել հեշտ երևցաւ ինձ, և որովհետև բարի գործելու համար ուզում էի զիտութիւն ձեռք բերել և որովհետև տեսնում էի, թէ մարդս ականջով աւելի բան է ուսանում, քան թէ լեզուով, և որովհետև կամենում էի վերջապէս ազատուիլ ամեն բանի վրայ վեր ի վերոյ, ծաղր ու կատակով խօսելու հին սովորութիւնից, որով իմ ընկերութիւնս միայն թեթևսոյիկ խենդերին էր դուր գալիս, — ուստի լուսնը երկրորդ սեղ տուի: Տարակոյս չունէի, որ սրան յաջորդող հարգի միջնորդութեամբ գործերս և ուսումս յառաջ տանելու համար առաւել ժամանակ կշահէի: Անստիճանութիւն, որ իմ մէջ արդէն սովորութիւն էր դարձած, վրատահութիւն էր տալիս ինձ միւս առաքինութեանց էլ թեկնածելու. իսկ լուսնը և շնորհքը մինչև այժմ ունեցած պարտքերիս դումարը քիչացնելով, բարորութիւն և անկախութիւն էին շնորհում ինձ, — օգնում էին ինձ վարժուելու նաև անստիճանութեան, արտաբնական, երկայնամտութեան, հարստութեան, անդոր-

բաւելան, հոստաւելան և խոսարհաւելան մէջ»:

Կանոններն երկու տեսակ են լինում. կան այնպիսիք, որ անպտուղ և այնպիսիք, որ պտուղաւոր բողբոջի են նմանում: Փրանկլինի կանոնները վերջին տեսակից էին: «Հսկեցէք և աղօթս արարէք» պատուէրին հետևելով, նա ամեն երեկոյ հաշիւ էր պահանջում ինքն իրնից բոլոր օրուայ ժամերի համար և խստիւ դատաստան էր կտրում իւր վրայ: Այնուհետև առջևն էր դնում վերոյիշեալ կանոնների գրքոյկն և նշանակում էր, թէ ինչ բան դրանց համեմատ էր գործած և ինչ բան՝ հակառակ: Վերջ ի վերջոյ մի ջերմ աղօթք էր վերառաքում դէպի Աբարիչն ամենայնի և զօրութիւն էր մաղթում նրանից: Այս գրքոյկի մէջ շատ աղօթքներ կային մասամբ նրա սրտից բղխած, մասամբ Ս. Գրքից, մասամբ էլ իրեն սիրելի աշխարհական քերթողներից առնուած: Ստեպյառաջ է գալիս գրքոյկի մէջ թովմաս բանաստեղծի հետևեալ տունը.

«Կեանքի և լուսոյ աղբիւր, Աբարիչ իմ Աստուած. տուր ինձ ոյժ բարին ճանաչելու և միշտ բարի գործելու. պահպանիր ինձ յիմարութիւնից, մեղքից, սնտոի մտքերից և ամեն ստոր խորհուրդներից. լքցուր ինձ զխտութեամբ, հոգւոյ հանգստութեամբ և մաքուր առաքի-

նութեամբ. սուրբ սիրտ և զուարթ հոգի հաստատիր իմ մէջ»:

Քաղցր է տեսնել մանաւանդ, որ Փրանկլին յատկապէս այն ժամանակ այսպիսի վերաթեման վճիռ սահմանեց, երբ որ արտաքին կողմից յաջող պայմանների մէջ էր: Այժմ նա հարուստ Գէնհամ վաճառականի գործակալն էր և սրա ազնութիւնից ամենայն ինչ լաւութիւն սպասելու իրաւունք ունէր իւր ասպագայի համար: Ինչքան երիտասարդներ կան, որ ունայն վայելքների հետևից ընկնելով, իրենց մարմնին էլ, հոգուն էլ վնասում են: Փրանկլին Աստուծոյ օգնութեամբ ուղիղ ճանապարհի վրայ մնաց և անվկանգ դիմացաւ այն գժուար փորձանքներից, որոնք գեռ հասնելու էին իւր գլխին:

Դ

ՄԻՆՉԵՒ ԻՆՔՆԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԸ

Այս փորձանքները չ'յապագեցան իրայ հասնելու: Գէնհամ, Փրանկլինի ազնուասիրտ գրելաւորը, որ իւր հետ զրեթէ իբրև մի հարազատ որդու հետ էր վարվում, յանկարծ մեռնում է և Փրանկլինի յոյսերից շատերը չբա-

նում են: Նա այժմ ակամայ ստիպուած էր վերստին այն կէտից սկսել, որ տեղ որ դադարած էր երեք տարի առաջ, այսինքն նորից գրաշարի պաշտօն որոնել Ֆիլադէլֆիայի մէջ: Այս միջոցին էր, որ Քայմէր, որի մօտ Փրանկլինն առաջ էլ աշխատած էր, մի լաւ ռոճկով պաշտօն առաջարկեց նրան իւր տպարանի մէջ: Փրանկլին թէև չէր համակրում այս կասկածելի և իւր արհեստին անհմուտ մարդուն, այսուհանդերձ ընդունեց նրա առաջարկութիւնը, պատճառ որ մի ուրիշ տեղ պաշտօն գտնել չէր կարանում այն միջոցին, և իսկոյն ժիր ժիր սկսաւ իւր պարտքը կատարել:

Նրանից գատ տպարանի մէջ կային և ուրիշ հինգ մարդիկ, որոնք Քայմէրի նման անշնորհ գործաւորներ էին: Փրանկլինի ձեռքի տակ, որ պայմանի զօրութեամբ տիրոջ տեղն էր բռնել տպարանի մէջ, առաջին օրից սկսեալ գործերը բոլորովին նոր կեանք ստացան: Թէ՛ աշակերտ և թէ՛ գրաշար — ամենքն էլ նրան պատուում էին, և նրա հանճարն ու կորովը տեսնելով ամեն օր մի նոր բան էին սովորում նրանից: Քայմէրն էլ շատ գոհ էր և նրան գովասանք շուսելուց չէր դադարում. սակայն այս գովասանքի բուն շարժառիթը թաքուն չէր մնում Փրանկլինից: «Թող որ Փրանկլին

տպարանդ մի անգամ կարգի բերէ և բանուորներդ մի լաւ կրթէ, այնուհետև կարող է գրնալ կորչիլ», ասում էր Քայմէր ինքն իրեն: Բայց չարին չար հատուցանելը Փրանկլինի բանը չէր: «Թող Քայմէր անխիղճ վարուի ինձ հետ, ասում էր նա իւր կողմից. այս դեռ չէ նշանակում, որ ես էլ անխիղճ և սևերես պիտի լինիմ. ընդհակառակն, ես ամենայն զօրութեամբ կջանամ կատարել յանձն առած պարտքս և գործը յառաջ կտանեմ, իբր թէ սա իմս լինէր»:

Եւ նա երեսի քրտինքով աշխատում էր կատարել իւր պարտքը: Նա սովորաբար հետևեալ միջոցն էր բանեցնում գժուար հանգամանքների մէջ: Նախ և առաջ հանգիստ քննութեան էր ենթարկում գործը. չետոյ ծալում էր մի թուղթ և մէկը միւսի հանդէպ գրի էր անցնում այն բոլորը, ինչ որ կարելի էր ասել այդ գործին թեր և դէմ: Այնուհետև, ինչպէս որ անում են թուաբանական հուսարութեան մէջ, գիծ էր քաշում հաւասար կշիռ ունեցող փաստերի վրայ և տեսնում էր, որ յաճախ մի կողմի մէկ փաստը միւս կողմի շատ փաստերից առաւել կշիռ էր ունենում: Գնալով այսպիսի հակադիր փաստերի թիւը նուազում էր և վճիռը վերջապէս ինքն իրեն էր յառաջ գալիս: Այս էր նրա բարոյական արգէրրան:

Ֆրանսիկլինի այս տեսակ աշխատասիրութիւնը հարկաւ շատ ձեռնտու էր Քայմէրին. սակայն և՛ս առաւել ձեռնտու էր և նոյն իսկ Ֆրանսիկլինին, որովհետեւ նա անգաղար կատարելագործվում էր իւր արհեստի մէջ: Քանի քանի գործաւորներ կան աշխարհիս վրայ, որոնք անընդունակ են հասկանալու, թէ անհոգութեամբ և ծուլութեամբ մի չար տիրոջ վնասել կամենալով, նրանք իրենք իրենց շատ առաւել են վնասում:

Քայմէրի տպարանում տառերն երբեմն պակասում էին և որովհետեւ այն ժամանակ Ամերիկայում ոչ մի ձուլարան չկար, այս պատճառով տպարանի մէջ մեծ շփոթ էր ծագում: Ֆրանսիկլին, որ Լօնդօն եղած ժամանակ միայն մի անգամ էր տեսել տառերի ձուլումը, այժմ փորձեց մի կաղապար շինելու և հին տառերը կնիքի տեղ գործածելով, նորերը թափեց կաւեղէն մայրերի մէջ: Քացի այսմանէ փայտի վրայ էլ զանազան զարդեր էր փորագրում, սև ներկ պատրաստում, մի խօսքով ամեն բանի մէջ ինքն իրեն օգնում:

Սակայն ինչքան որ նրա աջակցութեամբ յառաջ էին գնում գրաշարներն իրենց արուեստի մէջ, այնքան էլ վատանում էր Քայմէրի վարձուքը Ֆրանսիկլինի հետ: Նա գժգոհ էր ցոյց

տալիս իրեն և Ֆրանսիկլինի հետ կռուելու մի առիթ էր պտրում, որ և գտաւ հետեւեալ չընչին անցքի մէջ:

Մի օր մի սաստիկ աղմուկ է բարձրանում փողոցի վրայ և Ֆրանսիկլին դուրս է նայում պատուհանից պատճառն իմանալու համար: Քայմէր, որ հէնց այս շփոթի պատճառով դուրս էր ելել, վերաւորիչ կերպով և առանց ուշ դարձնելու պատուհաններից դուրս նայող զրացիների վրայ, բարձրաձայն հրամայում է Ֆրանսիկլինին իւր գործը տեսնելու. յետոյ ներս մտնելով ասում է նրան, թէ իսկոյն կարճակէր նրան, եթէ դաշնագրի զօրութեամբ այլ ևս երեք ամիս նրան համբերելու ստիպուած չլինէր»:— «Անփոյթ կացէք այդ մասին, ես ինքս իսկոյն կհեռանամ», ասում է Ֆրանսիկլին և նոյնժամայն հեռանում է տպարանից:

Երեկոյեան նրա մօտ է գալիս Մերեդիթ անուն զրաշարը: Այս երեսուն տարեկան մարդն առաջ գիւղական տնտեսութիւն էր ուսած և մի առանձին սէր չուներ զրաշարութեան արուեստի համար, որին որ ակամայ էր ձեռնարկել: Սա ցաւակցութիւն լալտնեց Ֆրանսիկլինի տպարանը թողնելու համար և Ֆրանսիկլին էլ իւր կողմից ասաց նրան, թէ մտադիր էր տուն վերադառնալ:

«Մերեզիթ խորհուրդ չտուաւ ինձ այդ անելու, պատմում է Քրանկլին, և հազորդեց, թէ Քայմէր շատ պարտք ունէր և փոխատուներն արգէն երկիւղի մէջ էին այս մասին, — թէ նրա խանութի գործերը վատ էին գնում և թէ ուրեմն նա շուտով պիտի սնանկանար — մի հանգամանք, որից ես կարող էի առիթ քաղել մի նոր տպարան հիմնելու համար: — Փող չունիմ, պատասխանեցի ես: Քայց Մերեզիթ յառաջ բերաւ, թէ իւր հայրը շատ յարգում էր ինձ և թէ նա սիրով պատրաստ կլինէր մեզ օգնելու, միայն թէ ես յօժարութիւն տալի ընկերանալու իւր հետ: Նրա ծառայութեան ժամանակը Քայմէրի մօտ լրանալու էր յաջորդ գարնան և թէպէտ ինքն էլ խոստովանում էր, որ գործին անընդունակ էր, բայց և այնպէս յուսով էր, որ եթէ ես նրա առաջարկն ընդունէի և իմ հմտութիւնը նրա դրամին միացնէի, ամեն բան կյաջողէր և մենք մեր գործը լաւ յառաջ կտանէինք, եկամուտը հաստատ բաժանելով: Այս բարի առաջարկութիւնը ձեռնտու երևցաւ ինձ, և ես ընդունեցի. Մերեզիթի հայրն էլ յօժարութիւն տուաւ: Այս ճերուսուն յայտնի էր, որ որդին իմ ազդեցութեամբ առ ժամանակ դադարած էր օղի գործածելուց, և նա յոյս էր տածում, թէ որդին գուցէ բոլորո-

վին կազատուէր այս վատ սովորութիւնից, եթէ առաւել մօտենար ինձ հետ: Այնուհետև ինչ որ հարկաւոր էր տպարանի համար Լօնդօն պատուիրեցինք. սակայն մեր դիտաւորութիւնը դեռ գաղտնի պիտի մնար»:

Սակայն Քայմէր արդէն զղջացել էր Քրանկլինի արձակման վրայ. նա լսել էր, թէ Նիւ-Ջէրսի նահանգը մտադիր էր թղթագրամի տպագրութիւն յանձնել նրան. բայց ո՞վ պիտի կարանար հոգալ այս դժուար գործին պէտք եղած տիպերն և զարդերը, եթէ ոչ Քրանկլին: Քայմէր երկնչելով, որ Նիւ-Ջէրսիի վարչութիւնը գուցէ մի ուրիշ տպարանի կ'ապսպրէր իւր պատուէրը, իսկոյն մի քաղաքավար նամակ գրեց Քրանկլինին և իւր կոպտութեան վրայ ապուռաշաւանք յայտնելով, խնդրեց, որ նա կրկին վերադառնայ իւր մօտ: Քրանկլին, փոքր ինչ տարտամելուց լետուց, համաձայնեցաւ: Հէնց այդ միջոցին էլ Քայմէր ընդունեց Նիւ-Ջէրսիից սպասուած պատուէրն և Քրանկլին պարզ տեսաւ, որ իւր լետ կոչուելու բուն պատճառն չէ թէ նրա զղջանքն էր, այլ շահասիրութիւնը: Սակայն նա երկար չմտածեց այս խորամանկութեան վրայ և սկսաւ պատրաստել մի պղնձատիպ մամուլ, որ մինչև այն ժամանակ մի չը տեսնուած բան էր Ամերիկայի մէջ: Մամուլի

շինութիւնից չետոյ նա իւր ձեռքով այլ և այլ նկարներ և զարդեր փորագրեց պղնձէ տախտակի վրայ, որ պէտք էր այժմ Բուրլինգթօն տանել, որպէս զի դրա գործածութիւնը գաւառական վարչութեան աչքի տակ կատարուէր: Այս բանին վերահսկելու համար առանձին պաշտօնաւորներ էին կարգուած:

Քայմէր շատ էր ուզում հարկաւ մէնակ ի գլուխ հանել տպագրութեան գործը Բուրլինգթօնի մէջ, բայց այնքան ճարտարութիւն ո՞վ էր տուել նրան. նա ստիպուած էր իւր հետ տանել Փրանկլինին և անձամբ լսել այն բոլոր գովասանքը, որ վիճակուելու էր սրան վարչութեան ականաւոր պաշտօնեաների կողմից:

Այս պաշտօնեաներից ոմանք շատ սիրեցին Փրանկլինին, մանաւանդ Սահակ Գիկօվ անուն զիտուն և ճարտար վերատեսուչը, որ մանկութեան ժամանակ որմաշէնների համար աղիւս կրելով, չետոյ ինքն իրեն գրել կարգայ սովորելով, ապա թէ մի երկրաչափի մօտ ծառայելով, վերջապէս բարձ ու պատուի հասած մի աշխատասէր և ազնիւ մարդ էր: Փրանկլին ազահութեամբ էր ականջ դնում այս պատկառելի ձերուսու գրուցներին և իբրև մի անզին գանձ ամբարում դրանց իւր սրտի մէջ: Ալևորն էլ իւր կողմից հաճութեամբ էր լսում Փրանկ-

լինի անցեալն և այն, թէ ինչ կերպով էր հասած իւր արդի վիճակին: Քարևմնայի ժամանակ, երբ որ Փրանկլին դրամների տպագրութիւնն աւարտելով հեռանալու էր Բուրլինգթօնից, Գիկօվ ասաց նրան. «Առաջուց տեսնում եմ, որ դու շուտով այս մարդուց (Քայմէրից) կբաժառուես և մեծ հարստութիւն կվաստակես Ֆիլադէլֆիայի մէջ հանճարիդ շնորհիւ»: Փրանկլին չէր յալտնած նրան, որ մի նոր տպարան պիտի հիմնէր Մերեդիթի հետ: Գիկօվի և միւս գաւառացիների բարեկամութիւնը ժամանակով բարի հետեանք էր ունենալու նրա համար:

Փրանկլին այնուհետև իսկոյն բաժանուէցաւ Քայմէրից: Մերեդիթի ծառայութեան ժամանակն արդէն լրացել էր, տպարանի գործիքն էլ արդէն հասել էին Լօնդօնից: Փրանկլին և Մերեդիթ մի տուն վարձեցին հրապարակի վրայ և գործի սկսան:

Մամուլը դեռ նոր էր ոտքի դրուած, երբոր Փրանկլինի բարեկամներից մին մի զիւղացի մուշտարի բերաւ նրա մօտ. Փրանկլին անչափ ուրախացաւ, որովհետև ընկերութեան զբամազլուին արդէն բոլորովին սպառուած էր: «Այս զիւղացու մեզ վճարած հինգ շիլլինգը, որ մեր առաջին արդիւնքն էր, ի դէպ ժամու հասնելով, առաւել ուրախութիւն տուաւ սրտիս, ա-



տում է Քրանկլին, — քան թէ այնուհետև վաստակած բոլոր գումարս միասին առնուած. իսկ ազնիւ բարեկամիս արարմունքն այնպիսի մի երախտագիտութեան պարտք դրաւ վրաս, որ այն օրից ես ուխտեցի միշտ օգնել երիտասարդ ձեռնարկուներին»:

Այժմ պէտք էր մի ամուր դիրք բռնել քաղաքի միւս երկու տպարանների՝ հանդէպ, պէտք էր այնքան փող շահել, որ կարելի լինէր տպարանի պէտքերը հոգալ, տան վարձը վճարել, բանուորների ապրուստն ապահովել և այլն: Մերեդիթ եռանդով էր աշխատում, բայց և այնպէս գործի բոլոր բեռը Քրանկլինի վրայ էր ծանրանում: Սա իմանալով որ յաջողութեան միակ ճանապարհն՝ ըստ կարելոյն լաւ արուած բանն էր և քրտնաջան աշխատասիրութիւնը, ամեն օր արշալուսին էր սկսում գործն և միայն մի ժամ հանգստանում իւր հիմնած կլուբի մէջ, ուր որ երբեմն ճառեր էին ասվում կարեւոր խնդիրների վրայ:

Քրանկլինի բարեկամները չէին ծուլանում գործ գտնելու նրա համար: Այլուքի անդամներից մինի միջնորդութեամբ նրան յանձնեցին տպագրել կուաքէրների պատմութիւնը, որ քառասուն թերթ պիտի կազմէր: Գիրքը թէև մեծ ծալք ունէր և բնաբանը՝ մանր տառերով տը-

պուելու ընդարձակ ծանօթութիւններ, սակայն և այնպէս Քրանկլին ամեն օր մի մի թերթ էր շարում և թերթը չաւարտած չէր քնում: Երբ մի անգամ զիշեր ժամանակ նրա երկու ութածալ էջերը խառնուել էին, նա նորից շարել սկսաւ և բոլորը կարգի բերելուց յետոյ միայն ննջելու գնաց: Այսպիսի տոկուն եռանդով էր, որ նա ամեն կողմից հաւատարմութիւն և պատիւ գրաւեց:

Մի օր վաճառականների կլուբի մէջ տարակույս էր ծագել, թէ Քրանկլինի և ընկ. տըպարանը կարող կլինէր արդեօք մրցել միւս երկու տպարանների հետ: — «Քրանկլինի պէս մի աշխատասէր մարդ օրումս չեմ տեսած», գոչեց յանկարծ դօկտօր Բարթը. «զիշերով կլուբից տուն վերադառնալիս ես միշտ գործի վրայ եմ տեսնում նրան. նա գործի վրայ է և՛ առաւօտեան, երբ նրա հարեւանները գեռ անկողնի մէջ են լինում»: Այս գովեստը լաւ տպաւորութիւն գործեց կլուբի անդամների վրայ և սրանցից մին ազատ բերմամբ միւս օր Քրանկլինի մօտ գնալով, յայտնեց, թէ սրտի մտօք յօժար էր մի գումար պարտք տալ նրան, եթէ նա կամենար, օրինակի համար, գրելու նիւթերի մի խանութ բաց անել Ֆիլադէլֆիայի մէջ:

Այժմ Քրանկլին զբօսանք չունէր. ոչ երէ

էր որսում, ոչ ձուկն, ոչ էլ պանդուկ էր յաճախում: Գործերի մէջ խտիր գնել չէր սիրում, աննշան կամ չնչին գործն ինչ ասել է՝ չգիտէր, և բանուորի շոր հագնելը պատիւ էր համարում իւր համար: Տպարանին հարկաւոր թուղթը ինքն էր բերում ձեռաշարժ սալակով: Խոստանում էր միայն այն, ինչ որ կարող էր կատարել, և անշուշտ կատարում էր, ինչ որ խոստացել էր — դրամ թէ գործ: Անճանօթներից շատերը տեսնելով նրան սալակը յառաջ հրելիս, կարծում էին թէ նա հոգւով և մտքով աղքատներից մէկն էր. բայց երբոր առիթ էին գտնում հետը խօսելու, խելօք աչքերը դիտելու, բարեհամբոյր դէմքը գննելու, եռանդուն ձառը լսելու, — այդ վաղաճաս կարծիքն իսկոյն փոխում էին:

Մերեղիթ օրէ օր աւելի էր զգում իւր և Ֆրանկլինի մէջ եղած ահազին տարբերութիւնը: Նա չէր կարող Ֆրանկլինի պէս անդուլ աշխատել. տպարանի մէջ մի աննշան դեր խաղալն էլ ծանր էր գալիս իւր սրտին, մանաւանդ որ հայրն էլ, նեղ վիճակի հանդիպելով, չէր կարանում յանձն առած պարտքը կատարելու: Ուստի մի օր Մերեղիթ հետեւեալ նամակը գրեց Ֆրանկլինին:

«Տեսնում եմ, որ զրաշարի պաշտօն վարելը միանգամայն իմ բանս չէ. ես կրթուած

եմ զիւղական տնտեսութեան համար. ուրեմն այս տեղ գալս և արդէն քսան տարեկան հասակի մէջ իբրև աշակերտ մի նոր արհեստ սկսելս մի վիճարութիւն էր: Իմ հայրենակիցներից շատերը միտք ունին հիւսիսային Կարօվինայի արգաւանդ երկիրը գնալու. ես էլ կամենում եմ միանալ նրանց և նորից ձեռնարկել նախկին զբաղմունքիս: Աստահ եմ, որ դուք անպատճառ մի նոր օդնական կգտնէք ձեզ համար: Ես դուրս կելիմ գործից և սրա մէջ ունեցած բաժինս լիովին ձեզ կթողնեմ, միայն թէ բարեհաճէիք մեր ընդհանուր պարտքերը յանձն առնել, հօրս տուած հարիւր Ֆունթը վերադարձնել, մասնաւոր փոքրիկ պարտքերս վճարել և ինձ երեսուն թալէր արծաթ և մի նոր թամբ շնորհել»:

Այս առաջարկութիւնը Ֆրանկլին չիպիտի կարանար ընդունել, եթէ փոքր ինչ առաջ հետեւեալ դէպքը պատահած չլինէր: Նրա մօտ եկել էր մի բարեկամ և խորհուրդ էր տուել, ինչքան կարելի է շուտով բաժանուելու Մերեղիթից, — որ գինովի քարշ էր գալիս պանդուկների մէջ, տպարանի վարկն արատելով, — և դորձը մէնակ յառաջ տանելու, աւելցնելով, թէ սրա համար պէտք եղած գումարը նա ինքն կտար Ֆրանկլինին: Գրեթէ մի և նոյն ժամա-

նակ մի ուրիշ բարեկամ էլ, առանց նախընթացի քայլն իմանալու, առաջարկած էր Փրանկլինին միև նոյն բանը: «Սրանք էին երկու ճշմարիտ բարեկամներ, ասում է նա, որոնց վեհանձն փորձունքն երբէք չիպիտի մոռանամ, քանի որ լիշողութիւն մնայ մտքիս մէջ»:

Փրանկլին յօժարութեամբ ընդունեց առաջարկուած նպատակները. բայց մէկ կամ միւս բարեկամի սիրտը չվերաւորելու համար, միայն իրեն հարկաւոր գումարի կէսը խնդրեց իւրաքանչիւրից: Այնուհետև հրապարակաւ իմաց տուաւ ժողովրդին, թէ ընկերութիւնը լուծուած էր և ինքն էր այժմ տպարանի միակ տէրը:

Տպարանի գործերն այժմ արագ յառաջ գնացին: Փրանկլին գրելու նիւթերի մի խանութ բաց արաւ և սկսաւ տպել վաճառականների համար պէսպէս հաշուեմատեաններ, պայմանագրեր, մուրհակներ և ուրիշ այս տեսակ թղթեր, որոնք Ամերիկայի մէջ նոր բաներ լինելով շատ պատուիրողներ էին գտնում:

Այս միջոցին նորից խնդիր էր ծագած թղթադրամ արձակելու մասին: Հին արժէթուղթ ունեցողներն երկիւղ էին կրում, թէ գրանց գինը կընկնէր: Այս խնդիրն մի հիմնաւոր քննութեան ենթարկուեցաւ Փրանկլինի հաստատած կլուբի մէջ և նա ինքն մի յօ-

դուած հրատարակեց, որով ակներև ապացուցանում էր, թէ թղթադրամի լաւելումն ոչ թէ չէր վնասիլ վաճառականութեան, այլ դեռ մի նոր ժրութիւն և կեանք կմտցնէր դրա մէջ, միայն թէ այս լաւելումն չափ ու սահմանով կատարուէր: Թղթադրամի հրատարակումն նահանգային պատգամաւորների ժողովումն էլ քուէների բազմութիւն ստացաւ և Փրանկլինի բարեկամներն զանց չարին յայտարարել, թէ նա միայն ընդունակ էր տախտակները փորելու և տպագրութիւնը հոգալու:

Մի և նոյն ժամանակ Փրանկլին ուզեց և մի լրագիր հրատարակել: Մերձաւորներից մին անգղուշութեամբ Քայմէրին հաղորդեց նրա միտքը և սա, Փրանկլինի առաջն առնելու համար, ինքն փութաց լուս ընծայել մի լրագիր: Սակայն չկարողացաւ վնաս տալ Փրանկլինին: Մի լրագիր, որ կամենում է արձագանգ գտնել, հերիք չէ միայն որ տպուի, այլ պէտք է որ նախ և առաջ լաւ կերպով խմբագրուի. իսկ Քայմէր այս հմտութիւնից գլխավին զուրկ էր: Նա չկարողացաւ իննսունից աւելի բաժանորդ գտնել և վերջապէս թերթը Փրանկլինին վաճառեց: Սրա ձեռքի տակ թերթը մի նոր ուղղութիւն ստացաւ և կարճ միջոցին ամենքի համակրութիւնը գրաւեց: Մինչև այն ժամանակ

Ամերիկայի մէջ եղած լրագիրների սովորութեան հակառակ, որոնք անգլիականները լոկ ստուերն էին, Ֆրանկլին ոկսաւ ինքնակախ հետադատել հայրենեաց հանդամանքներն և այս բանի մէջ ցոյց տուած տաղանդովն այնքան ազդեցութիւն ունեցաւ, որ նահանգային ժողովի նշանաւոր անդամներն անգամ նրան աշխատակից դարձան: Ինչպէս որ ամեն բան ուղիղ գործածուելով՝ բարիք է յառաջ բերում և վատ գործածուելով՝ չարիք, այսպէս է և լրագիրը: Ֆրանկլինի խմբագրութեան մէջ իմաստութիւնն աթոռակից էր ազնուութեան և արդարութեան. նա համարձակ մերժում էր, ինչ որ ընդգէմ էր հանրային օգտին, և արեւբար սաստում էր այն շահամոլներին, որոնք երբեմն ահագին գումարներ էին առաջարկում նրան իրենց անձնական օգտին ձեռնտու մի յօգուած տպել տալու համար:

Ֆրանկլինի առևտուրն էլ ծագելով էր գլխաւորապէս այն տնտեսական կանոնների շնորհիւ, որ նա ինքն էր մշակած, իբրև ուղիղ, և որ երկաթի կամքով էլ գործադրում էր:

Նրա մոլորութեան օրերից մնացել էին դեռ մի քանի բաներ, որ պէտք էր վերստին ուղղել, և նա երջանիկ էր համարում իրեն, որ վերջապէս կարող էր այժմ լրումն տալ իւր վա-

ղեմի ցանկութեան: Նա բոլորովին հաշտուեցաւ Ջէմս եղբօր հետ, իւր մօտ ընդունեց նրա զաւակներից մէկին, լաւ կրթեց սրան, ամեն տեսակ տպագրական գործիք շնորհեց սրան և օգնեց, որ դեռ մի ուրիշ տեղ տպարան հաստատէ: Ֆրանկլին արգէն, որ Ֆրանկլին, ցանկալով օգնել իւր ապերախտ բարեկամներին, վատնած էր Վէրօնի անուամբ ընգունած գումարը. այս գումարը նա այժմ տոկոսիքով հանդերձ վճարեց Վէրօնին: Վերջապէս Ռիթ օրիորդի վիճակն էլ շատ տանջում էր նրան: Ընթերցողն կ'ընչէ, որ Ռիթ, ինքն իրեն Ֆրանկլինից թողուած համարելով, մի ուրիշ մարդու հետ էր ամուսնացել: Այս ամուսնութիւնը չարաբաստիկ էր: Մարդը զինեմոլներից մէկն էր. վերջը բացուեցաւ, որ նա մի ուրիշ տեղ էլ պսակուած էր և դեռ մի կենդանի կին ունէր: Մի օր նա, պարտքերից նեղուելով, փախչում է Ֆիլադելֆիայից և ապա թէ մեռնում է: Ռիթ մնում է անօգնական: «Նա միշտ տրտում էր և մէնակ», ասում է Ֆրանկլին: «Ես կամեցայ դրստել առաջուայ սխալս և առաջարկեցի նրան իմ աջը: Նա ինձ բարի և հաւատարիմ ընկեր դարձաւ և իրանութիւն երկարատև բարգաւաճմանը շատ օգնեց: Մենք երջանիկ էինք միմեանց հետ և հաւասար փութով ձիղն էինք

Թափում մեր բախտն յաւէտ անպակաս պահպանելու համար:

Փրանկլին վերջապէս գտել էր մի հանդիստ և հասել էր այն կէտին, որ տեղից պիտի կարանար առաւել ազատ սփռել իւր հոգու հարուստ գանձերը, քան թէ առաջ:

Ե

### ՓՐԱՆԿԼԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՌԻՓՆԵՆ ՉԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Փրանկլին ամուսնացաւ 1730 թ. իւր քսանչորս տարեկան հասակում: Նա հիմալ էլ, առաջուայ պէս, կատարեալ գուարճութիւն էր գտնում աշխատանքի մէջ. գիշերները գոհ սրբտով հանգստանում էր, առաւօտը գուարթ գուարթ գործի գնում: Քախտ չէր սրոնում դատարկ և սնտախ ցոյցերի մէջ. այժմս էլ, երբ լիութիւնն ոտք էր գրած իւր շէմքին, նա մինչև գիշեր աշխատում էր հասարակ գործաւորի շոր հագած. այժմս էլ չէր արհամարհում սալակով թուղթ տանելու տպարան. այժմս էլ կաւեդէն էին նրա պարզուկ ճաշի անօթները, անագից էր նրա թէլի դրդալը: Մի օր Փրանկ-

լինի կինն առաջարկում է նրան թէլն չինապակու թասով, որը մէջ գրուած էր և մի արծաթէ դրդալ, և տեսնելով նրա ապշութիւնն, ասում է. «Այ մարդ, դու էլ այնքան արժանի ես չինապակու» և արծաթի, ինչքան և մեր գրացին»: — «Այս առաջին անգամն էր, գրում է Փրանկլին, որ արծաթ և չինապակի երևեցաւ տանս մէջ»:

Ով որ չէ հասկացել Գեօթէլի \*) խօսքերը, թէ «ընտանիքից սկսիր և այս տեղից ընթարձակիր ինքդ քեզ աշխարհիս մէջ», թող Փրանկլինի կեանքը գիտէ և այդ ասացուածի իմաստին վերահաս լինի: Փրանկլին, իւր մտաւոր զարգացման վրայ միշտ հոգ տանելու համար, օրը մի ժամ նուիրում էր շահաւէտ ընթերցանութեան և լռիկ սենեակի մէջ նստած, բանակցում էր հին և նոր դարերի մեծ հանճարների հետ, ձգտելով սեփականել նրանց գիտնական ջանքերի արդիւնքը: Ընտիր գրքերի համար նա շատ փող էր ծախսում. բայց դեռ ինչքան լաւ լաւ գրուածքներ կային, որոնք

\*) Տիեզերահռչակ գերմանացի բանաստեղծ, որ ծնաւ 1749 թ. և վախճանեցաւ 1832 թ. Սա և Շելլերը (1759--1805) գերմանական բանաստեղծութեան ամենապայծառ աստղերն են: Քարգ:

տակաւին յայտնի չէին նրան: Նա միայն իւր անձի վրայ չէր մտածում, այլ հոգ էր տքնում և նրանց մասին, որոնք իրեն պէս գեռ շատ բանից զուրկ էին այս աշխարհում: Եւ այս է իրաւ ազնիւ մարդիկների գլխաւոր լատկանիշը, որ նրանք բարի բանը չէ թէ միայն իրենց համար են ցանկանում, այլ և ուրիշների համար: Փրանկլին, մի որ և է ընտիր մատեան շատերին մատչելի անելու միջոցների վրայ մտածելիս, մի հասարակաց գրադարան հիմնելու միտք յղացաւ 1731 թ.: Այս օգտաւէտ գաղափարն իսկոյն ընդունելութիւն գտաւ, և լիսուն մարդ գրքեր գնելու համար քառասնական շիլլինգ տալով, պայմանագիր եղան, որ այնուհետե՛ էլ ամեն մի տարի տաս տաս շիլլինգ պիտի վճարէին: Քաժանորդների թիւը գնալով բազմացաւ և Ֆիլագէլֆիալի «գրասէրների խումբը», տաս տարի անցնելուց լետոյ, ընկերութեան իրաւունք ստացաւ: Ասենք ի գէպ, որ այս ընկերութեան գրատունը 1790 թ. ութ հազար հատորի չափ գիրք ունէր. 1850 թ. այս թիւն երեսուն երկու հազարի էր հասած, իսկ այժմ 200,000-ի չափ է: Աւելորդ է լիշել, թէ որքան օգտաւէտ է այս հիմնարկութիւնը \*)

\*) Տես. «Ազգային կրթութիւն: Հրատարակ»

Փրանկլինի հայրենեաց համար, որ նրա տուած բարի օրինակին հետևելով, այժմ գրեթէ ամեն մի տեղ մի մի ճոխ գրադարան ունի:

Անսպառելի էր Փրանկլինի ջանասիրութիւնը: Թուղթն Անգլիայից բերել տալու փոխարէն, որ միշտ թանգ էր նստում, նա ուզեց ինքն պատրաստել. այս միտքը նա իսկոյն իրագործեց, և Ամերիկան արհեստի մի ճիւղով էլ հարստացաւ: Նրա գործարանին նայելով, ուրիշ քաղաքների մէջ էլ թուղթ շինել սկսան:— Փրանկլինի տպարանի մէջ ամենալաւ գրաշարներ էին պատրաստվում. երբեմն նա գործիներ էր ընծայում նրանց և հեռաւոր տեղեր առաքում, որպէս զի ուրիշներին էլ իրենց արհեստը սովորցնէին և կամ ինքեանք տպարան հիմնէին, և եթէ հիմնէին, փողով էլ օգնում էր նրանց, և երախտագէտ աշակերտներն երբէք չէին մոռանում նրա վեհանձն մարդասիրութիւնը:

1732 թուականը մի առանձին նշանակութիւն պիտի ստանար Փրանկլինի և գաղութների համար: Այս թուականին Վիրգինիայի

կական ընթերցանութիւնք էդուարդ Լարուէի: Տպագրութիւն Միքայէլի Միանսարեանց: Ս. Պետերբուրգ»: Թարգմ.:

անտառների և յատկապէս Վաշինգթօն անուն մի մարդու տան մէջ լոյս տեսաւ մի մանուկ, որ ընդունեց Գէորգ անուն: Դա էր Գէորգ Վաշինգթօն:

Սակայն մի ուրիշ բան էլ աշխարհ եկաւ նոյն թուականին, դուրս գալով աղնիւ Փրանկլինի սրտից. այս էր մի «Օրացոյց», որ շարունակ քսան տարի նոր ի նորոյ խրատելով և ուսուցանելով, նահանգէ նահանգ պիտի շրջէր և ոգի ազդէր առաջիկայ դժուար փորձանքներին արիապէս գիմանալու համար: Արորանի մէջ նիրհած մանուկ դիւցազն էլ պատանի դառնալիս մի կազդուրիչ ողեկան սնունդ պիտի ստանար այս գրքից:

Արևը պէտք է որ ճառագայթէ, տիեզերքի մէջ լոյս սփռէ. աղնիւ բնաւորութիւնը պէտք է որ «սէր շնչէ, սիրով ի մահ իսկ ննջէ». պէտք է, որ նա մի անգամ տեսած ճշմարտութեանը հպատակի և դրան միշտ քարոզէ: Զկայ աշխարհիս վրայ մի արդելք, որ կարանար երկիւղ ազդել աղնիւ սրտին և խափանէր հետեւելու երկնային ձայնին — ոչ հուր, ոչ բանտ, ոչ սնուր:

Ամեն առաւօտ երիտասարդ Փրանկլին — սա գեռ նոր քսանվեց տարեկան էր, երբ որ օրացոյցի առաջին համարը հրատարակեց — առան-

ձին սենեակում նստած, մարդում էր իրեն առաքինութիւն և իմաստութիւն քարոզելու նուիրական պաշտօնի մէջ: Նա դիտելով իւր անցեալ կեանքը, դասերով հարուստ կեանքը, տեսնում էր, որ ինչ բարի բան որ ուսած էր, իւր ներքին մարդու լաւագոյն ձայնին հնազանդելով էր ուսած, և ինչ որ վատ դրան հակառակելով:

Օրացոյցը լոյս տեսաւ Քիչարդ Սաունդերսի կեղծ անուամբ «Խեղճ Քիչարդի Օրացոյցը» վերնագրով:

Այս օրացոյցի գրութեան եղանակի վրայ երկար զրուցելու փոխարէն, լաւ է որ մի հատուած յառաջ բերենք նրա միջից: Վերցնենք 1758 թ. համարը, վերջինը, որի մէջ Փրանկլին, գարձեալ Քիչարդ Սաունդերսի անուամբ, գեղեցիկ կերպով մի պատմութեան մէջ է ամփոփում հին հատորների կենսական իմաստութեան դասերը: Ընթերցողը կտեսնէ, որ այս դասերից շատերն անմահական առածների կարգն են անցած:

Հեղինակն ասում է «Հարստութեան ճանապարհ» յօդուածի սկզբում, թէ շատ ուրախանում է, «Խեղճ Քիչարդի» առածներն ուրիշների շրթունքից լսելիս, և ապա թէ շարունակում է այսպէս.

«Տեսէք, թէ որչափ պիտի ուրախանալի հետեւեալ անցքի վրայ: Մի քանի օր առաջ ես կանգնեցնում եմ ձիս մի տեղ, ուր որ մի սնանկացած վաճառականի գոյքեքի ծախուելուն պատճառով ահագին բազմութիւն էր հաւաքուած: Առանհարկութեան րուպէն դեռ չէր հասած. մարդիկ ժամանակի վատութեան վրայ էին խօսում իրար հետ: Դրանցից մէկը, մի ալևորի դիմելով, ասաց. «Հայր Աբրահամ, հապազ ո՞ւր ի՞նչ կ'ասես այս վատ ժամանակի մասին: Խօսի՛ր, լսենք, այս ծանր հարկերը մեր տունը չէն քանդիլ արդեօք. ի՞նչ անենք, որ դրանց վճարել կարանանք: Խորհուրդ տուր մեզ, հայր Աբրահամ»:

«Հայր Աբրահամը տեղից բարձրացաւ և ասաց. «Եթէ կուզէք ականջ դնել խորհրդիս, ասելիքս կարճ կը կապեմ, պատճառ որ իմատունին՝ մի խօսքն էլ բաւական է, իսկ լիմարին—հազարն էլ քիչ, ինչպէս ասում է խեղճ Ռիչարդը:

«Ամենքն էլ լսելու ցանկութիւն յայտնեցին, և ձերուսին, մինչդեռ միւսները նրա շուրջը տեղ բռնելու վրայ էին, շարունակեց և ասաց.

«Քարեկամներ, իրաւ շատ ծանր են մեր հարկերը: Եթէ տէրութեան սահմանաճնեքից

զատ մենք չունենալինք ուրիշ հարկեր, դեռ կարող կլինէինք համբերել և հեշտ վճարել. բայց տեսէք, որ ուրիշ շատ հարկեր էլ ունինք վճարելու: Տէրութեան հարկերից երկու անգամ աւելի հարկ է դրուած մեր վրայ մեր ծուլութեամբ, երեք անգամ աւելի՝ մեր հպարտութեամբ, հինգ անգամ աւելի՝ մեր լիմարութեամբ,—և այս հարկերն ո՞չ մի իշխան կամ պատգամաւոր կարող չէ ոչ թեթեւցնել, ոչ նուազեցնել: Սակայն եկէք խորհուրդ տեսնենք, գուցէ փրկութեան մի հնար գտնենք, պատճառ—ով որ ինքն իրեն օգնէ, Աստուած էլ նրան կ'օգնէ, ասում է խեղճ Ռիչարդն իւր օրացոյցի մէջ:

«Եթէ մի տէրութիւն պահանջէր ժողովրդից, որ սա օրն երեք ժամ ձրիաբար ծառայէր նրան, միթէ չէինք ասիլ, թէ դա մի շատ կոպիտ տէրութիւն է. բայց դատարկութիւնն աւելի ժամանակ է իւրում մեզնից, եթէ հաշուենք այն բոլոր ժամերն, որ վատնում ենք անդորձութեամբ և սնոտի վայրաբանութեամբ: Ծուլութիւնն իւր ետեւից հիւանդութիւն է բերում և մեր կեանքը կարճում: Ծուլութիւնը մի ապականիչ ժանգ է. իսկ աշխատութիւնը՝ մի մաքրիչ զօրութիւն, և դուք գիտէք, որ շատ անգամ զորձաճուող բանալին, քանի զնայ



փայլում է. այսպէս է ասում և խեղճ Քիչարդը: Ինչքան ժամանակ ենք կորցնում քնի վրայ, մոռանալով որ քնած աղուէսն հաւ չի բռնիլ և որ գերեզմանի մէջ էլ գեռ բաւական ժամանակ կունենանք քնելու, ինչպէս ասում է խեղճ Քիչարդը: Եթէ ամեն բանից ամենաթանգազինը ժամանակն է, ուրեմն միթէ շռայլութիւն չէ՞ դրա վատնումը. կորած ժամանակն անդարձ է, ասում է խեղճ Քիչարդը: Ուրեմն, եղբայրներ, արթուն լինինք, հսկենք և գործենք, և շահաւէտ բան գործենք: Այսպիսով ամեն բան, ինչ որ դժուար էր թւում մեզ, կթեթեւայ և կյաջողի: Ծուլութիւնը սովոր է ամեն բան դժուարացնել, իսկ աշխատասիրութիւնը զիւրացնում է ամեն բան: Այլ որ ուշ է վերկենում, ուշ է հասնում նպատակին. որոնք տարտամ և ծուլ շարժին, աղքատութեան լինին բաժին, ասում է, խեղճ Քիչարդը:

«Արդ ինչ շահուած կլինինք, լաւ ժամանակների սպասելով. ներկայի բարւոքումը միթէ մեր ձեռքը չէ: Աշխատասիրութիւնը սպասելու հարկ չունի, և ով որ միայն լուսով կ'ապրի, անօթի կմեռնի: Յգնեցէք ինձ ձեռքեր, քանզի չունիմ ես զօյքեր: Արհեստի յատակն ոսկի է, միայն թէ սիրէինք նրան: Սովը թէև մօտենում է երբեմն աշխատաւոր մարդու շէմքին,

բայց ներս չէ մտնում. ներս չէ մտնում և դատաստանի պաշտօնեայն, որովհետև աշխատաւորն պարտքերը միշտ վճարում է: Գնենք, որ դու ոչ գանձ ես գտած, ոչ էլ հարստութիւն ժառանգած փոյթ չէ. աշխատասիրութիւնն է բախտի հայրը: Աշխատասէրին ամեն բան շնորհում է Աստուած. ուստի զնա՞ գիր ձեռքդ արօրի մածին, մինչ ծոյլերը մնան քնած ի մէջ մահճին, և շտեմարանքդ լիութեամբ կ'ուռչին: Աշխատիր, քանի որ ցերեկ է և չգիտես, թէ վաղն ինչ արդելք կգտնես: Մէկ այսօրն երկու վաղից թանկ է: Եթէ վաղն անելու գործ ունիս, այս օր վերջացուր: Եթէ մի սպասաւոր լինէիր, միթէ չէիր ամաչիլ անգործ երևնալու բարի տիրոջդ առջև. արդ քանի որ ինքդ ես քո տէրը, միթէ ամօթ չէ, եթէ ինքդ քեզ անգործութեան տաս: Թէ քեզ համար յատկապէս, թէ ընտանիքիդ և հայրենիքիդ համար այսքան անելիք ունենալուց չետոյ, աշխատիր վաղ ոտքի կանգնել, որպէս զի արևը վերևից վաչր նայելով, չ'ատէ թէ «պաւկած է գեռ ծուլաբար: Մեր գործերը շատ են հարկաւ և ձեռքերս տկար. սակայն չլուսահատինք—ամեն բան կյաջողի, «միայն թէ սիրով, հանգարտ ու խելօք ջան դնենք բարւոյն և չընինք անհոգ»:  
«Ուրեմն մարդս երբէք ինքն իրեն հան-

գիտտ չխախտի շնորհէ, հարցնում էք դուք: Լսեցէք, բարեկամներ, թէ ինչ է ասում այս մասին խեղճ Քիչարդը. եթէ ուզում ես ազատ լինել, լաւ գործածիր ժամանակդ և ոչ մի րոպէ մի կորցնիր, որովհետեւ ոչ մի րոպէի վատահել կարելի չէ: Աղատութեան հասնում է փութաջան մարդը միայն, իսկ պղերդը — լաւիտեան: Կարծում ես թէ ծուլութեամբ աւելի քաղցր կեանք կվարես, քան թէ աշխատութեամբ: Աչ. պատճառ դատարկապորտ ծուլութիւնից շատ վըշտեր են ծագում և անօգուտ հանգստութիւնից — դառն հոգսեր: Փախիր դուարճութիւնից, և նա ինքն քո ետեւից կվազէ. լաւ պահիր իւրանութդ, և նա քեզ լաւ կպահէ: Եթէ կամենում ես, որ գործդ յաջողի, ինքդ դնա ետեւից. եթէ չես կամենում, ուղարկիր ետեւից: Խնամքի պակասութիւնն աւելի վնասակար է, քան թէ հրմտութեան պակասութիւնը: Չատերն են կորած, ուրիշի խնամքին ապաւինելով: Մարդս քանի քիչ ապաւինի ուրիշին, այնքան աւելի իրեն օգնած կլինի: Գործերդ ինքդ հոգա — այս է ամենից լաւը: Աշխատասէր ուսանողն անշուշտ կստանայ գիտութիւն և շրջատես մարդը՝ կարողութիւն, ինչպէս որ քաջը՝ զօրութիւն և առաքինին՝ արքայութիւն: Ազո՞ւմ ես գտնել հաւատարիմ ծառայ, ինքդ քեզ ծառայիր, ա-

մենափոքր գործիդ անգամ ինքդ հոգ տար: Մի օր մի դամ պակասելով, ձիւ պայտը կորչում է, պայտի պակասելովը ձին էլ է կորչում, ձիւ պակասելով կորչում է և ձիաւորը — թշնամին վրայ հասնելով սպանում է նրան. և այսպէս ամեն բան կորչում է, որովհետեւ հոգ չէր տարուած մի դամի պէս չնչին իրի վրայ:

«Բարեկամներ, այսքանս հերիք թող լինի հոգատարութեան և ջանասիրութեան մասին, որ ունենալու է մեզնից ամեն մէկն սեփական գործերի նկատմամբ: Սակայն ով որ կամենում է մի հաւատի օգուտ քաղել այս բաներից, նա պարտական է և չափաւորութիւն պահպանել: Ինչքան և ուզում ես աշխատիր, քրտինք թափիր. բայց թէ վաստակդ պահել չկարանաս, աղքատ կըմնաս, ասում է խեղճ Քիչարդը: Պարտ խոհանոցի կտակը վտիտ է: Կարօտութիւն չբաշելու համար պէտք է, որ ինչ փութով վաստակես, այն փութով էլ պահպանես: Սպանիացիք չհարստացան Հնդկաստանով, որովհետեւ նրանց ծախքերն արդիւնքից շատ էին:

«Արեմն մոռացէք ձեր թանկ լիմարութիւններն և տեղիք չէք ունենալ զանգատելու ծանր ժամանակի և ծանր հարկերի վրայ: Մի շռայլութիւնն աւելի սուղ է նստում, քան թէ երկու մանուկների կրթութիւնն, ասում է խեղճ

Ռիչարդը: Գուք կարծում էք թէ փոքր ինչ թէչն, երբեմն փուռնչը, երբեմն բնտիր ճաշերը, սիրուն շորերը, երբեմն էլ թեթե խնջուքը շատ թանկ չեն նստում. սակայն ի միտ առէք, բարեկամներ, որ հատիկները շատանալով կոյտ են կազմում: Զգուշ կացէք մանր ծախքերից. երբեմն հերիք է մի փոքրիկ ծակ, որ մի մեծ նաւ դնայ ծովի տակ, ասում է խեղճ Ռիչարդը:

«Այժմ գուք հաւաքուած էք դատարկ պաճուճանք դնելու ձեզ համար. այս բաները գուք բարիք էք անուանում, բայց որ լաւ նայէք, չարիք են: Գուք յափշտակուած էք զրանց էժանութիւնից, և գուցէ իրաւ իրենց իսկական զննից էժան վաճառուին. բայց և այնպէս, եթէ մի ապրանք անհրաժեշտ հարկաւոր չէ, միշտ թանկ կընտար: Թէև արժէր մի փարա, նախ պիտուքիդ մտիկ արա, ասում է խեղճ Ռիչարդը: Չպէտք բաներ գնելով, պէտքերն էլ կձախես շուտով, աւելցնում է նա:

«Մրանով նա թերևս ուզում է ասել, թէ էժանութիւնը միայն մի երևութական բան է, կամ թէ՛ առքի աւելի վնասակար է, քան թէ օգտակար, եթէ հարկաւոր դրամի պակսեցնում է: Այլ չգիտէ, որ այսպէս էժան բան գնելով, շատերն իրենց տունը քանդել են: Իմաստուն մարդու համար ուրիշի վնասն էլ խրատ է, իսկ չիմարն

Իւր վնասից անգամ չէ խրատում: Զատ մարդիկ միայն մի նոր զգեստով զարդարուելու համար նօթի են անկողին մտնում և ամբողջ դերդաստունը սոված պահում: Կերպասը, մետաքսը, թաւիշն և ասուին շատերի օջախը մարեցին. այս իրերը կեանքի անհրաժեշտ պէտքերից չեն. բայց ինչքան մարդիկ իրենց խելքն ու միտքը զրանց են տալիս միայն արտաքին փայլի համար: Այսպիսով բազմանում են մարդուս արուեստական, շինծու պէտքերն և մի աղքատի փոխարէն՝ հարիւր չքաւոր է յառաջ գալիս: Այսպիսով չքաւոր են դառնում մեծատուններն և ստիպվում են պարտք առնել այն տեսակ մարդիկներից, որոնց ատում էին առաջ: Ոմանք մի փոքրիկ կարողութիւն ժառանգելով կարծում են, թէ անուպառելի է. դեռ ցերեկ է և զիշերը հեռու, ասում են նրանք. շատից քիչը հանելով, վնաս չելինիլ: Մանուկներն և տըխմարներն իրաւ կարծում են, թէ մի փարան և քսան տարին բնաւ վերջ և ծայր չունին. բայց նայիր այլերի տոպրակին—եթէ միջից միշտ հանես, վրայից էլ նորը չ'ածես, շուտով կ'հասնես յատակին, ասում է խեղճ Ռիչարդը, աւելցնելով, որ ջրհորի յարզը ցամաքելուց յետոյ կ'իմացուի:

«Պճնասէր հպարտութիւնը մի պատուհաս

է. Հպարտութիւնը մի աղքատ է, աղքատից էլ վատթար: Մի զարդ գնելուցդ չեսոյ, վրայից էլ տասն հատ պիտի աւելցնես, որ չափը գտնես. բայց խեղճ Ռիչարդն ասում է, թէ աւելի հեշտ է առաջին փափազը ճնշել, քան թէ յաջորդները յագեցնել: Հարուստին նմանելու ձգտող չքաւորի յիմարութիւնը նուազ չէ այն դորտի յիմարութիւնից, որ եզին նմանել ուզելով, փրքուեցաւ և պալթեցաւ:

«Մեծ նաւերը կարող են ազատ ազատ մտնել ծով, իսկ փոքրերին պէտք է քերուել եզերքով: Հպարտութիւնը սնափառութեան հետ է ձաշում և ատելութեան հետ ընթրում: Եւ ինչ զին ունին վերջապէս այս հպարտութիւնը, զարդն և շուքը, որոնց համար այնքան տառապանք և վիշտ են քաշում մարդիկ. ոչ առողջութիւն են տալիս, ոչ էլ ցաւերն ամփոքում: Մի մազի չափ չեն բերում պատիւ, այլ միայն նախանձ և չարիք անթիւ:

«Հետևաբար միթէ յիմարութիւն չէ այսպիսի չնչին բաների համար պարտքի տակ ընկնելը: Այս աճուրդի պայմանները վեց ամսուայ վարկ են տալիս, և մեզնից շատերն գուցէ այն հաշուով են այս տեղ եկել, որ պճնուին, առանց պատրաստի փող հանելու քսակներից: Բայց տեսէք, եղբայրներ, թէ ինչ էք անում,

պարտքի տակ մտնելով. դուք ձեր ազատութեան վրայ ուրիշին իշխանութիւն էք տալիս: Եթէ որոշեալ ժամանակին պարտքը չհատուցանէք, պարտատէրին հանդիպելուց պիտի ամաչիք, հետը խօսելուց վախենաք, ոգորմելի և ստորացուցիչ պատճառներ յառաջ բերէք, հետզհետէ ձեր արդարութիւնը կորցնէք և վերջապէս մինչև ի վատթար ստութիւնը նուաստանաք: Ստութիւնը երկրորդ մեղքն է, պարտք անելը — առաջին. ուղիղ կանգնել շատ դժուար է դատարկ, պարապ քսակին:

«Ինչ կասէիք, եթէ մի իշխան սաստիկ հրամանով, բանտ և կապանք սպառնալով, արգելէր ձեզ և ձեր կրներին ձեր քէֆին համեմատ հագնուելու: Միթէ չէիք ասիլ, որ այդ իշխանը մի բռնակալ է: Արդ միթէ չէք տեսնում, որ այս չնչին հազուատների համար պարտքի մէջ ընկնելով, դուք ձեզ կամովին բռնակալութեան էք մատնում: Պարտատէրն իրաւունք ունի ձեր ազատութիւնը խլելու, եթէ կամենայ: Ապրանք առնելիս դուք շատ քիչ էք մտածում հատուցման մասին. բայց փոխատուն առաւել լիշողութիւն ունի, քան փոխառուն: Փոխառուն փոխատուի ստրուկն է և պարտապանը՝ պարտատէրի ծառան. ուստի ատիր այդ կապանքներն, աշխատասէր եղիր, չավաւոր

եղիր, և ազատ կրմնաս: Առ այժմ գուցէ լաւ վիճակի մէջ էք և փոքր ինչ աւելորդ ծախք անելն անվնաս էք համարում. բայց լիշեցէք, որ ծերութիւն կայ, նեղութիւն կայ: Արդիւնքը վաղանցուկ է, ծախքը յարատեւ. աւելի հեշտ է երկու հաց թխել, քան թէ մէկը տաք պահել. լաւ է քնել անօթի, քան թէ զարթել պարտքերով. եթէ քրտինքով վաստակածդ պահպանես, գտած կլինիս իմաստութեան քարն, որ ամեն բան ոսկի է դարձնում, և երբ գտնէք այս քարը, վատ ժամանակների և չափազանց հարկերի վրայ զանդատուելու էլ տեղիք չէք ունենայ:

«Այս է, բարեկամներ, բանականութեան խրատը. սակայն չափազանց յոյսեր մի դնէք աշխատասիրութեան, չափաւորութեան և խոհեմութեան վրայ, թէև սրանք պատուական բաներ են. առանց Աստուծոյ օրհնութեան ամենայն ինչ կրմնայ ունայն, ասում է խեղճ Ռիչարդը: Դարձեալ մի խօսք. ով որ չէ ուզում խորհուրդ լսել, շատ դժուար է նրան օգնել»:

«Այսպէս աւարտեց ծերունին իւր ճառը:

«Մարդիկ ուշադրութեամբ ականջ էին դնում, շատ հաւանում էին խրատներին. բայց հենց նոյն ժամին — ասես թէ լսածները մի հասարակ քարոզ լինէր — հակառակը գործեցին.

սակարգութիւնը սկսաւ թէ չէ, ամեն մարդ, արևորի խօսքերը մոռանալով. կուրօրէն յարձակուեցաւ ապրանքի վրայ:

«Քարեսիրտ ծերունին, ինչպէս երևում է, լաւ էր ուսած և մարտած իմ օրացոյցը: Իմ անուան ստեպ կրկնութիւնը գուցէ տաղտուկ էր պատճառում ուրիշներին, բայց ոչ ինձ. ընդհակառակն, իմ անձնասիրութեան համար դա մի քաղցր փաղաքշանք էր, թէև հաստատ գիտէի, որ իմ անուամբ լիշուած իմաստուն խօսքերի տասներորդ մասն անգամ իմս չէր, այլ միայն արդիւնք այն հունձերի, որ հաւաքած էի բոլոր դարերի և ազգերի առողջ բանականութեան դաշտի վրայ: Այս իմաստուն խօսքերի կրկնութիւնը դարձեալ մի օգուտ ունեցաւ ինձ համար. առաջ ես էլ մտադիր էի մի կապացու գնել վաճառուող ապրանքից, բայց սլւորի ճառը լսելով, վճռեցի չըգնել, և վերագարձայ դէպի տուն իմ հին կապան էլի մի քանի ժամանակ հագնելու որոշմամբ: Ընթերցող, եթէ դու էլ այսպէս անես, ինձ նման կշահուես»:

Գառնալով վերոյիշեալ «տասներորդ մասին», պէտք է նկատել, որ Ֆրանկլին համեստութեամբ շատ փոքրացնում է իւր վաստակների իսկական արժէքը: Այս խորհուրդները բղխած էին իւր հոգուց, նրանց ազբիւրն իւր

կեանքի մէջ էր: Իմաստութեան զոհարներից շատերն զուցէ ժողովրդի շրթունքից և գրքերից էին հանուած. բայց և այնպէս մեծ էր Ֆրանկլինի արժանիքն, սրովհետեւ նա մի անգամ ուսած բանին մի նոր և ինքնուրոյն կնիք էր տալիս, որ ազգի համար օգտաւէտ բաներին միշտ ուշք էր դարձնում և ամբարած գանձերն ի լոյս հանելու և ընդհանուր սեփականութիւն շինելու ուղիղ ճանապարհը գտնում:

«Հարստութեան ճանապարհն» ոչ թէ միայն օրացոյցի միջնորդութեամբ, հապա և առանձին տպագրութեամբ շատ տարածուեցաւ. նրա մի քանի հատուածները, մեծ թերթերի վրայ տպուելով, ապակեւոր շրջանակի մէջ էին գրվում և իբրև դարդ պատերի վրայ կախվում:

Օրացոյցն արդէն առաջին համարից սկըսեալ մեծ համակրութիւն գտաւ. ժողովրդի տնտեսական և բարոյական լուսաջաղիմութեան մասին դեռ ոչ ոք այդպիսի ինամք չէր տարած: Օրացոյցի բաժանորդների թիւը, տարէց տարի բազմանալով, վերջապէս հասաւ 10,000-ի, որ այն ժամանակ Ամերիկայի մէջ մի չտեսնուած բան էր: Եւ ինչքան հետևողներ ունեցաւ Ֆրանկլին այս աստղարէղի վրայ: Օրացոյցի միջնորդութեամբ ժողովրդի մէջ լուսաւորութիւն մտցնելն ամենայարմար եղանակն համարուեցաւ

և Ֆրանկլինից լետոյ այս միջոցն ամեն տեղ գործադրուել սկսաւ. այնուհետև Ամերիկայի և Եւրոպայի մէջ լոյս տեսնող օրացոյցների թիւը հարիւր հազարների հասաւ:

Ֆրանկլինի զրութեան եղանակը միշտ ամենալաւը կ'մնայ:

«Օրացոյցի մէջ, ասում է Մինիէն, Ֆրանկլին հիանալի պարզութեամբ ուսուցանում էր գիւղական տնտեսութեան, անասնապահութեան, արհեստագիտութեան և առողջապահութեան ամենակարևոր միջոցներն և ժողովրդի իմաստութեան անպաճոյճ ձևով ցոյց էր տալիս այն կանոնները, որոնք մարդկային բախտի հիմքն են կազմում: Խեղճ Րիչարդի իմաստութիւնը գործի, զգուշութեան, չափաւորութեան, խոհեմութեան և ազնւութեան առաջնորդ է: Նա խորհուրդ է տալիս շատ հասարակ, բայց ճշմարտախօս լեզուով և քարոզում է բարոյականութիւնը յանուն շահի. նրա բոլոր միտքերի նպատակն այս է, թէ *աստից աստիս* չէւոյ մի հասարակոն բախտ և շահ: Ֆրանկլին, այս գաղափարի մէջ զօրանալով, վերջին տարիները միշտ ասում էր, թէ ինչպէս առանձին անհատների, այնպէս էլ ամբողջ պետութիւնների երջանկութեան միակ անսուտ երաշխաւորն առաքինութիւնն է: Ամենավատթար մարդն ան-

գամ մի աղնիւ մարդ կդառնար, եթէ առաքի-  
նութեան օգուտը ճանաչէր, ասում է նա»:

Օրացոյցի տարածման եղանակն անգամ  
շատ գործնական էր: Մինչև Փրանկլինի ժա-  
մանակն Ամերիկայի մէջ հին լաթերը սովորա-  
բար դէն էին ձգվում. նա չալտարարեց, թէ  
պատրաստ էր փողի տեղ մի մի օրացոյց տալ  
հնոտիք բերողներին, և այսպէս նրա թղթի  
գործարանը միշտ լիքն էր հին լաթերով, որոնք  
կարևոր էին թղթի շինութեան համար:

Աշխարհիս մէջ յաճախ է պատահում, որ  
մի մարդ նիւթապէս հարստանալուց լետոյ՝ բա-  
րոյսպէս աղքատանում է և նիւթական շահա-  
մոլութեան գոհ դառնում: Փրանկլին այդպէս-  
ներից չէր: Որչափ որ աճում էր նրա բարեկե-  
ցութիւնը, նոյն չափ էլ զօրանում էր նրա մէջ  
ուրիշներին օգտակար լինելու և իւր շուրջը բա-  
րիք սերմանելու փափաքը: Բայց նա չէր մո-  
ռանում, որ միայն ինքն իւր վրայ հսկելով,  
միայն իւր կատարելագործութեան վրայ աշ-  
խատելով, միայն յառաջագիմելով պիտի յաջո-  
ղէր գէթ մասամբ լրումն տալ այդ փափագին.  
և նա շարունակ ուսանում էր, շարունակ կար-  
գում:

Սակայն ինչ նպատակով են կարգում շա-  
տերը:— Կամ միայն ժամանակ վատնելու և

կամ, որ առաւել չարն է, զրականութեան ան-  
պէտք վիժածների մէջ վայելք գտնելու նպա-  
տակով: Փրանկլին բացառապէս անարատ և  
յստակ աղբիւրներն էր դիմում. նրա ընթերցա-  
նութեան միակ խորհուրդն էր մտաւոր և բա-  
րոյական կատարելութիւն:

Ստար զբաղանութիւնների մի քանի գան-  
ձերը թարգմանօրէն էին դրուած նրա առջև.  
միւսներն անմատչելի կերպով փակուած էին  
նրա համար: Այս փակուած գործերի բուն բնա-  
գիրը կարդալու տենչով նա որոշեց օտար լե-  
զուներ ուսանել: Արդէն գիտենք, թէ նա ինչ  
էլ որոշէր, այն էլ անշուշտ կկատարէր, մա-  
նաւանդ որ անհնարին բաների ետևից չէր ընկ-  
նում երբէք:

«Ստար լեզուներ սկսայ ուսանել 1733 թ.,  
ասում է նա: (Ուրեմն երբոր քսանեօթ տարե-  
կան էր:) Կարճ միջոցում այնպէս բնտելացայ  
Ֆրանսերէնին, որ այս լեզուով գրուած գրքերը  
արդէն կարող էի հեշտ կարգալ: Այնուհետև  
խոսերէնին գիմեցի: Ես ունէի մի բարեկամ,  
որ նոյնպէս ուսանում էր այս լեզուն: Նա և ես  
սիրում էինք ճատրակ խաղալ միասին: Տեսնե-  
լով որ այս զրօսանքը շատ ժամանակ էր խլում  
ինձնից, վճռեցի միայն այն պայմանով շարու-  
նակել մեր խաղը, որ տանողն ամեն անգամ

իրաւունք ունենայ մի դաս տալ տարուողին, մի անգիր սերտելու կանոն և կամ թարգմանութիւն, և դաս առնողն ստիպուէր պատրաստել դրան մինչևի մեր յաջորդ հանդիպումը: Եւ որովհետև մենք գրեթէ հաւասար էինք խաղում, այս պատճառով հաւասար էլ ջարդում էինք միմեանց իտալերէնի մէջ: Յետոյ կամեցայ սպանիերէն գրքեր կարդալ և այս լեզուն էլ ուսայ: Արդէն մի անգամ ասացի, որ մանկութեանս ժամանակ միայն մի տարի էի յաճախել լատինական վարժարան: Այնուհետև բոլորովին մոռացել էի լատինական լեզուն. բայց Ֆրանսերէն, իտալերէն և սպանիերէն լեզուներին ընտելանալուցս յետոյ, երբ մի օր ձեռքս լատիներէն Աստուածաշունչ ընկաւ, զարմանալով տեսայ, որ առաւել էի հասկանում, քան թէ կարծում էի: Այս գիւտը քաջալերեց ինձ վերստին պարապելու լատիներէն լեզուով, որին և բաւական հեշտ հմտացայ, պատճառ արդէն առաջնոց ուսած լեզուներս իմ աշխատանքը շատ գիւրացնում էին»:

### ՓՐԱՆԿԼԻՆ ՀԱՍԱՐԿԱՅԻՆ ՊԱՋՏՅՈՒՆԵՐԻ ՄԷՋ

Պէնսիլվանիա նահանգի պատգամաւորները կազմում էին մի մարմին, որ կոչւում էր «Ընդհանուր ժողով»: Մեզ յայտնի է, որ Փրանկլին արդէն թղթադրամի առաջին տպագրութիւնից ի վեր բարեկամներ ունէր այս ժողովի մէջ: Օրացուցի հրատարակութիւնից յետոյ բարեկամների թիւն և՛ս առաւել շատացաւ և գտանուեցան մի քանի մարդիկ, որոնք Փրանկլինի նշանակութիւնն ուղիղ ճանաչելով, քարտուղարի պաշտօնն առաջարկեցին նրան յիշեալ ժողովի մէջ: Ընտրութեան ժամանակ պատգամաւորներից մին աշխատում էր ոգորել Փրանկլինի դէմ և մի ուրիշ անձի վրայ դարձնել ընկերների ուշադրութիւնը. սակայն և այնպէս ձայների բազմութիւնը Փրանկլինը գրաւեց: Հակառակորդն, այս ելքի վրայ դայրանալով, նրա ուխերիմ թշնամին դարձաւ այնուհետև: Փրանկլին ի սրտէ ուզում էր հանդստացնել դժգոհ սոսիսին և հաշտեցնել նրան իւր հետ: Մի օր նա լսեց, որ այս թշնամին շատ մատենասէր մարդ էր և ունէր մի հազուադիւր գիրք, որի վրայ անչափ պարծենում էր: Փրանկլին այս



լսելուն պէս՝ մի քաղաքավար նամակ գրեց նրան, ամենևին ցոյց չտալով, թէ նրա թշնամութիւնն իրեն յայտնի էր, և խնդրեց որ բարեհաճի իրեն ուղարկել այն զիրքը մի քանի օրուայ գործածութեան համար: Պատգամաւորն ոչ թէ միայն ուղարկեց զիրքը, հապա և յաջորդ նիստի ժամանակ ինքն անձամբ մօտեցաւ նրան և մտերմաբար նրա աջից բռնելով յայտնեց, թէ միշտ պատրաստ էր նրան ծառայելու: Թշնամութեան մասին էլ խօսք չեղաւ: «Առ հասարակ առաւել օգտուէտ է խոհեմաբար վերջ դնել թշնամութեան, քան թէ զըրգաւ և սնունդ տալ զրան», — ասում է Փրանկլին այս դէպքը պատմելիս: Նա իմաստութեամբ վարուեցաւ, և չվնասեց իւր պատուին:

Այնուհետև ընդհանուր ժողովի ամեն տըպագրելի գործերը Փրանկլինի ձեռքն անցան և բացի այսմանէ՝ նա Ֆիլադելֆիայի նամակատան վերատեսչի պաշտօնն էլ ստացաւ: Այս պաշտօնն առաջ Բրայֆօրդ անուն տպագրագետն էր վարում, որ միշտ աշխատել էր խափանարար լինել Փրանկլինի հրատարակած օրացոյցի տարածուելուն. այժմ Փրանկլին կարող էր վրէժ հանել նրանից, եթէ միայն ընդունակ լինէր այսպիսի վատութեան:

Հին առասպելներն ասում են, թէ ինչ

բան էլ շօշափէր Միդաս թագաւորը, բոլորն էլ ոսկի կդառնար: Մի և նոյնը կարելի է ասել և Փրանկլինի վերաբերմամբ, պատճառ ինչ բան էլ նրա գործունէութեան շրջանի մէջ մտնէր — բարեօքումն կստանար, ինչ էլ մտածէր — կեանք կընդունէր:

Ֆիլադելֆիա քաղաքի մէջ թէև կային գիշերապահներ, բայց զրանց կազմութիւնն և գործունէութիւնը թերի էր. Փրանկլին ուղղեց այս պակասը: Այնուհետև նա կազմեց հրկիզաշէջների մի խումբ և հրդեհներից ապահովող մի ընկերութիւն, որ մինչև այս օրս էլ տևում է Ֆիլադելֆիայի մէջ: Նահանգի սահմանները միշտ վտանգվում էին վայրենի հնդկների ասպատակներից. Փրանկլին տեսնելով, որ միայն կամաւոր զինուորների վաշտով կարելի էր վերցնել այս չարիքը, մի առանձին գրութեամբ բացատրեց ժողովրդին, թէ ինչպէս պէտք էր հոգ տանել սահմանների պաշտպանութեան վրայ. նրա թուղթը հազար երկու հարիւր ստորագրութիւն ստացաւ քաղաքի մէջ, տասն հազար էլ նահանգի մէջ, — և զինուորները գունդն իսկոյն կազմուեցաւ:

Մի օգտաւէտ գործ աւարտելուց յետոյ՝ Փրանկլին իսկոյն մի ուրիշ և նոր բանի էր ձեռնարկում: Այսպէս նա մի ձեմարան հիմնեց

Պէնսիլվանիայի մանկտու դաստիարակութեան համար և հէնց առաջին տարուայ ընթացքում հինգ հազար ֆունտի չափ կամաւոր օժանդակութիւն ընդունեց ժողովրդից: Եւ երբ պէտք եղաւ մի հոգաբարձութիւն կազմել ճեմարանի համար, ամենքն էլ միաբան նրան ընտրեցին նախագահ և նա մինչև իւր մահն այս պաշտօնի մէջ մնաց, հանապաղ փոյթ տանելով իւր ձեռակերտի բարգաւաճման վրայ: Փրանկլին իւր զգօն պաշտօնավարութեամբ այնպիսի մեծ համբաւ ստացաւ, որ ուրիշ նահանգների պատգամաւորներն անգամ դալիս էին հեռաւոր տեղերից նրա խորհուրդը իմանալու, յառաջ քան թէ ձեռնարկէին մի որ և է դպրոցի հիմնարկութեան:

Քաղաքի փողոցները սալարկուած չէին, լուսաւորուած չէին և յորդ անձրևից յետոյ դրանց միջով անցնելը վտանգաւոր էր. Փրանկլին չ'հանգստացաւ, մինչև որ դրանք մի սալահատակ և լապտերներ չստացան: Այնուհետև նա մի հիւանդանոց էլ հաստատեց տկարների և ծերերի համար: Հետևեալ դէպքը ցոյց է տալիս, թէ որ աստիճանի զգայուն էր նրա սիրտը:

Մի օր Վիթֆիլդ անուն մի օտար քահանայ սկսում է քարոզներ խօսել Քէորդիայի մէջ

բացուելիք որբանոցի համար փող հաւաքելու նպատակով: Փրանկլին եկաւորի վրայ տեղեկութիւն ստանալուց յետոյ յայտնում է նրան, թէ նա առաւել քիչ ծախքով կարող կլինէր իրագործել իւր փափագը, եթէ ուղենար Ֆիլադէլֆիայի մէջ հիմնել որբանոցը, պատճառ Քէորդիա նահանգը շինութեան փայտ չունէր և այս նիւթն Ֆիլադէլֆիայից այն տեղ տանելը շատ թանկ կնստէր: Այս հիմնաւոր կարծիքին ամենքն էլ հաւան էին, բայց ոչ Վիթֆիլդ. սա իւր իւր մտքի վրայ հաստատ էր մնում: Փրանկլին էլ վճռեց ոչինչ չտալ նրան: Քաղաքի հոգևորականներն արդելեցին եկաւոր քահանային եկեղեցիները մէջ քարոզելու, ուստի նա բաց հրապարակի վրայ էր կարգում իւր հրաւերը: «Մի օր ես էլ պատահամբ առիթ ունեցայ, պատմում է Փրանկլին, լսելու նրա ճառերից մին, որ անշուշտ հանգանակութեամբ պիտի վերջանար: Չէ, ես քեզ ոչինչ չեմ տալ, ասացի ես մտքիս մէջ: Գրպանումս ունէի մի բուռ սև փող, երեք կամ չորս արծաթի դօլլար և հինգ ոսկի պիսթօլ: Մինչդեռ նա խօսում էր, սիրտս սկսաւ մեղմանալ, և մտքումս դրի տալ նրան զէթ սև փողս. յետոյ նրա ճարտար լեզուից հրապուրուելով, սկսայ ամաչել սև փողից և վճռեցի արծաթն էլ տալ նրան. իսկ ճառի

վերջաբանն այնպէս սքանչելի էր, որ ես բոլոր գրպաններս պարզեցի և տուի նրան ինչ որ ունէի—և՛ ոսկիս և՛ ամեն բան»:

Ջարմանայի էր Փրանկլինի դործունէութիւնը: Այնպէս լաւ հոգալ ընտանեկան պէտքերն և օրացոյցի և լրագրի դժուար գործերը, ճիշտ վարել նամակատան վերատեսչի պաշտօնը. ի լոյս կոչել այնքան հաստատութիւններ և գրեթէ անձամբ տնօրինել ամեն մէկի վարչութիւնը. ուսումնասիրել այնքան լեզուներ. եռանդով յառաջ տանել ընդհանուր ժողովի քարտուղարութեան տաժանելի պաշտօնն և վերջապէս գիտնական գիւտերի համար էլ ժամանակ դտնել այս բոլորն ուրիշ ոչինչ կարող չէ ազդել մեզ, բայց թէ հիացմունք:

Մի սուանձին յօդուած պէտք կլինէր գրել, եթէ կամենայինք մի առ մի յառաջ բերել նրա ուսումնական փորձերի և մտքերի ընթացքը, որոնք շանթարգելի գիւտով պսակուեցան: Նրա շարադրութիւնն այս առարկայի մասին սկզբում հեզութեան նշաւակ էր դարձել: «Ինչ օգուտ կարող է ծագել գիտութեան համար Պէնսիլվանիայի անտառներից», ասում էին այլ և այլ ուսումնական ակումբներում և մանաւանդ Լօնդօնի մեծամիտ գիտնականների շրջանում: Բայց և այնպէս շարադրութիւնը Փրանսերէն, գեր-

մաներէն, իտալերէն թարգմանուեցաւ և հասարակային կարծիքը, շնորհիւ անաչառ հետադօտութեան, Փրանկլինի կողմը միտել սկսաւ: Եւ երբ վերջապէս Փրանսիայի տիեզերահազակ Ռիֆօն բնագէտն էլ վճռողաբար նրա կողմը բռնեց, այն ժամանակ ամենայամառ լեզուներն անգամ պապանձուեցան: Լօնդօնի գիտնական պարոններն դարձեալ մի նոր նիստ կազմեցին՝ խորնդիրն այլ ևս մի անգամ քննելու համար, և վերջ ի վերջոյ ուղղեցին իրենց ուսումնական ամբարտաւանութիւնից յառաջ եկած սխալը: Իսկ գիտութիւնների արքունի ձեմարանը պատուաւոր անդամակցութեան իրաւունք շնորհեց շանթարգելի հեղինակին և մի առանձին ոսկէ շքադրամով պատուեց նրան:

Ինչ ասել կ'ուզէ, որ Փրանկլինի հռչակուելովը նրա բարեկամներն էլ պիտի պարծենային: Քաղաքացիները կամելով արժանապէս յարգել Փրանկլինին, որ կեանքի ամեն ասպարէզների վրայ միակերպ գործօն էր եղած, նախ առաջարկեցին նրան նահանգային խորհրդականի պաշտօն և ապա թէ ընտրեցին նրան ընդհանուր ժողովի պատգամաւոր: Բացի այսմանէ, տեղական վարչութիւնն էլ յանձնեց նրան հաշտարար դատաւորի կոչումն և կարգեց նրան բոլոր փոստերի գլխաւոր վերատեսուչ: Եւ

եթէ այնուհետև դէպ էր լինում քաղաքացի-  
 ներին լսելու նրա նոր նոր գործերի համբարը,  
 օրինակ թէ ինչպէս նա 500 կամաւոր զինուոր-  
 ների գլուխ անցնելով, ձմեռ ժամանակ վաճառեց  
 հնգրկներին նահանգի հիւսիսային սահմաննե-  
 րից և այս սահմանները բերդերով պատսպա-  
 րեց,— թէ ինչպէս մի առանձին տեսակ վառա-  
 րան հնարեց և արտօնագիրը մերժեց, ասելով  
 թէ ամեն մարդ պարտաւոր է, առանց շահի  
 ակնկալութեան, ժողովրդին նուիրել իւր արած  
 դիւտը, մանաւանդ որ աշխարհումս մարդ չկայ,  
 որ ինքն էլ նախորդների դիւտից օգուտ քա-  
 ղած չլինէր,— քաղաքացիներն էլ չէին զար-  
 մանում, այլ ասում էին. «նա ամեն բան կա-  
 րող է, մենք դեռ շատ բարիք կտեսնենք  
 նրանից»:

Է

**ՀԱՉԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԼՕՆԴՕՆԻ ՄԷՔ**

Պէտքի վանիայի ժողովուրդը, ինչպէս և  
 Ամերիկայի միւս տասներկու անգլիական գա-  
 ղութները, ծանր տառապանքների պիտի հան-  
 դիպէին շուտով: Նրանց մայր երկիրը, որտեղից

որ գաղթած էին, Անգլիան էր. սակայն Ամե-  
 րիկայում հաստատուելուց ի վեր նրանք վայե-  
 լում էին որոշ ազատութիւն և իրաւունքներ,  
 որոնցից այժմ կամենում էին զրկել նրանց Անգ-  
 լիայի Գէորգ Ք. թագաւորն և սրա պաշտօ-  
 նեաները:

Սրանք կամայական հարկեր էին դրել բո-  
 յոր տասներեք գաղութների վրայ, մինչդեռ  
 առանց ազգային պատգամաւորների որոշման  
 սր և է հարկ դնելն օրէնքով արգելուած էր:  
 Երկրի ամենալաւ մարդիկն գայրացան Լօնդօնից  
 եկած անիրաւ պահանջներից և զգուշարար բո-  
 ղոքներ բարձրացրին դրանց դէմ. բայց Անգ-  
 լիայի կառավարութիւնը կոյր մնաց և չտեսաւ,  
 որ ապօրինի և բռնի միջոցներ բանեցնելով  
 գաղթականների վերաբերմամբ, ինքն իրեն էր  
 վնասում, պատճառ որ դրդում էր նրանց բա-  
 ժանուելու մայր երկրից: Երեք ու կէս միլիօնի  
 չափ բնակիչ ունեցող նահանգները մի վերին աս-  
 տիճանի արդիւնաւոր շուկայ էին անգլիացիների  
 առևտրի համար, ուր նրանք վեց միլիօն ֆունտ  
 ստերլինգի ապրանք էին վաճառում ամեն տարի:  
 Այժմ այս բոլորը կորցնելու վրայ էին: Մէկ  
 անիրաւութիւնն ետևից բերում է և ուրիշը:  
 «Եթէ նրանք յանդգնին հակառակել մեր հրա-  
 մանին, ասացին անգլիական իշխանները, մենք

զինու զօրութեամբ կըստիպենք նրանց հնա-  
զանդելու, և թող այնուհետև կրկին և երեք-  
կրկին վճարեն»:

Զանց ենք առնում այս տեղ մի առ մի  
պատմելու գժտութեան ընթացքը. առաւել ըն-  
դարձակ նկարագրութիւն կամեցողները թող  
բարեհաճին զիմել ստորև նշանակուած գրքոյ-  
կին, որ նուիրում ենք ընթերցողների ուշադ-  
րութեան \*):

1764 թ. Փրանկլին իւր քաղաքակրցները  
յանձնարարութեամբ Լօնդօն գնաց հաշտարար  
միջնորդութեան համար: Նա մի տարի առաջ  
էլ գնացել էր Լօնդօն, բայց ուրիշ պատճառով.  
այն ժամանակ դեռ ոչ մի ամերիկացի չէր կար-  
ծում, թէ մօտաւոր ապագայում արքունի կա-  
ռավարութիւնը կուզենար ոտնակոխ անել ազա-  
տութիւնը, պատուի և խոհեմութեան օրէնք-  
ներն և լուծի տակ ընկճել իրեն հաւատարիմ  
մի երկիր: Սակայն այն ժամանակ էլ մի քանի  
ազատամիտ մարդիկ գուշակում էին, թէ սր  
կողմը պիտի փչէր քամին կառավարութեան

\*) Գէորգ Վաշինգթօն, գործ Ֆէրզենանդ  
Շմիդթի. Թարգմ. Փ. Վարդանեան: Առաջին տիպը  
լոյս տեսաւ Զմիւռնիայում, երկրորդը՝ Փիֆլիսում  
1885 թ.:

շրջաններում: Կրէմդըն լօրդը, Փրանկլինի հետ  
խօսելիս, նկատել էր, թէ «Չնայելով ձեր այն-  
քան հռչակուած սիրոյն դէպի Անգլիան, զիտեմ  
որ դուք ամերիկացիք մի օր պիտի խզէք ձեզ  
սրա հետ միաւորող կապերն և անկախութեան  
գրօշակը վերցնէք»:— «Ոչինչ բան այնքան հե-  
ռու չէ իմ հայրենակիցներից, ինչքան որ մայ-  
րենի երկրից զատուելու և մի առանձին պե-  
տութիւն կազմելու միտքը», պատասխանել էր  
Փրանկլին, աւելցնելով մի վայրկեան լետոյ—  
«միայն թէ դուք մեր պատուին չղիպչէիք»:—  
«Ղշմարիտ է և հէնց այդ է գալոց խռովու-  
թիւնների մի պատճառը, որ ես այժմէն գու-  
շակում եմ», ասել էր լօրդը:

Փրանկլին այժմ Լօնդօն էր եկած ամեն  
միջոց ի գործ դնելու, որպէս զի կառավարու-  
թեան և մինիստրների ազդեցութեան կուրօրէն  
հետևող խորհրդարանը լետ քաշուէր անիրա-  
ւութեան ճանապարհից:

«Մենք չենք կամենում զատուիլ ձեզնից,  
բայց զրկանք էլ կրել չենք ուզում ձեր ձեռ-  
քից», ասում էր Փրանկլին. նոյնը կրկնում էին  
և զազութների ամենաընտիր մարդիկը: Ամե-  
րիկացի պատգամաւորները մի խորհուրդ էին  
կազմել Նիւ-Յորկում, ուր ներկայ էր և ազ-  
նուամիտ Վաշինգթօնը: Հետևեալ նամակից, որ

նա գրում էր մի ընկերի, պարզ երևում էր, թէ ինչքան համամխտ էր նա Ֆրանսկլինին գըլխաւոր հարցի նկատմամբ.

«Այժմ որ մեր գոռոզ տիրապետներն ոչ այլ ինչ են ցանկանում, բայց թէ սուսթուր անել և կործանել մեր ազատութիւնը», գրում էր նա, «ինձ շատ կարևոր է թւում, որ մենք շուտով մի քայլ գործէինք թշնամու հարուածը խափանելու և մեր նախնի իրաւունքները պաշտպանելու համար: Բայց թէ ինչ պէտք է անել իսկապէս—դեռ չգիտեմ. միայն թէ այս կասեմ հաստատ, որ մեզ մէկ վայրկեան անգամ ներելի չէ կորցնել սրով պաշտպանելու մեր հայրենաւանդ բարիքը. այս է խորին համոզմունքս: Սակայն սուրը, — խնդրեմ չմոռանաք, — Լուի Ֆերշլին գործանք չեմ, Ֆեր վերշին սողմէնը: Ոմանք ասում են. արդէն փորձը ցոյց տուաւ, որ մեր խնդիրները կշիռ չեն ստանում արքայական գահի և խորհրդարանի առջև: Բայց եկէք դարձեալ մի փորձ փորձենք — նեղենք նրանց վաճառականութիւնն և գործարանները. դուցէ այսպիսով կարանանք ստիպել նրանց յարգելու մեր իրաւունքները: Հիւսիսային նահանգներն արդէն գիմել են այս միջոցին»:

Նահանգներն իրաւ գիմեցին այդ միջոցին և երկար ժամանակ համբերում էին առանց

ղէնք վերցնելու: Ֆրանկլին, իբրև հաշտարար միջնորդ, անդու ջան էր դնում երկպառակութեան առաջն առնելու և հրատարակում էր Ղօնդօնի մէջ բազմաթիւ գրուածքներ, պարզ ցոյց տալով անգլիական ժողովրդին, թէ կառավարութիւնը մի կորստաբեր շաւղի վրայ էր գտանվում: Թէպէտ նա գիտէր, որ իւր հայրենակիցները վերջ ի վերջոյ զէնքի պիտի դիմէին, այսու հանդերձ քանի որ յոյս ունէր համոզական խօսքով ազդելու կառավարութեան վրայ, ոչ մի հնարաւոր միջոց չէր բաց թողնում մարդկային արեան յեղումն արգելելու համար:

Չատ բնական է, որ այսպիսի ընթացքի համար նա կառավարիչների ատելութեանը պիտի ենթարկուէր, և կառավարութիւնն իրաւ զրկեց նրան ամերիկային փոստերի վերատեսչութեան արդիւնաւոր պաշտօնից: Բայց միթէ այս պիտի կարանար հեռացնել Ֆրանկլինին արդար դատի պաշտպանութիւնից: Բնաւ ոչ:

«Մեր նահանգները», գրում էր նա մի բերեկամի, «ամենախոհեմ վարուած կլինին, եթէ այժմէն իսկ մի ընդհանուր ժողով կազմեն իրենց իրաւունքները բացարձակ հրատարակելու համար և միաբան գաշն կապեն — ոչ մի հարկ չտալ կառավարութեան, մինչև որ թագաւորն

և երկու խորհրդարաններն այս իրաւունքները չվերահաստատեն: Վստահ եմ, որ այս քայլը մի վճռական ազդեցութիւն կունենայ և այնուհետև կառավարութիւնը կամ անհրաժեշտ կը տեսնէ մեր իրաւացի պահանջները կատարելու և կամ կուզենայ բռնի հարկադրել մեզ հրաժարուելու դրանցից: Բայց մենք չենք հրաժարուիլ, և նրա անիրաւ հալածանքից մեր միութեան համար ոչ ոք և սիրտ առնելով, քաջ ցոյց կտանք աշխարհի, որ մեր վարմունքն արդար էր լիովին»:

Տասներեք նահանգների պատգամաւորներն, այս խորհրդին համեմատ, մի ընդհանուր ժողով կազմեցին Ֆիլադելֆիայի մէջ և գրեցին մի յայտարարութիւն ազգային իրաւունքների, մի աղերսագիր դէպի թագաւորն, մի հանրագիր դէպի բրիտանեան ազգն և մի ծանուցագիր անգլիական զաղթականներին— թղթեր, որոնցից իւրաքանչիւրն ամենավսեմ ազնուութեան և հասուն խոհեմութեան մի վկայական էր:

Ֆրանկլինն այլ ևս մի անգամ հաշտութեան փորձ փորձեց, սակայն տեսնելով, որ դժ էլ ապարդիւն մնաց և լսելով, որ իրեն բանտարկել էին կամենում, նաւ նստաւ և չուեց դէպի հայրենիք:

Տասնմէկ տարուայ բացակայութիւնից լետոյ՝ նա վերադարձաւ Ֆիլադելֆիա շէ Մարտի 1775 թ., բայց այժմ իբրև 69 տարեկան մի ալևոր ծերունի: Քաղաքացիք մեծ պատուով ընդունեցին նրան և նոյն թուականին պատգամաւոր ընտրեցին ընդհանուր ժողովի համար:

Ը

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հացի տեղ՝ քար տուին զաղթականներին և համբաւեցին նրանց իբրև «ապստամբ» մարդիկ, որոնց ոչ թէ խօսքով պատասխան տալ պէտք էր, այլ վառօդով, կապարով և սրով: Ի՞նչ էր մնում անել ամերիկացիներին, բայց թէ հրատարակել աշխարհի առջև, որ այնուհետև նրանք կարող չէին իբրև իրենցը ճանաչել Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը: Այսպէս էլ արին, և տասներեք միացեալ նահանգների անկախութեան յայտարարութիւնը լոյս տեսաւ 4 Յուլիի 1776 թ.:

Բայց անգլիական կառավարութիւնը չէր ուզում կորցնել իւր իշխանութիւնն առանց մարտնչելու, ուստի նորաձին տէրութիւնն էլ

իւր ազատութիւնը վայելելու համար մարտըն-  
ջելու ստիպուեցաւ, և այսպէս սկիզբն առաւ  
հիւսիսային Ամերիկայի անկախութեան պատե-  
րագմբ:

Անգլիան տասներեք դունդ զօրք ուղարկեց  
Ամերիկա՝ չօու անուն զօրավարի առաջնորդու-  
թեամբ. սրան հրամայուած էր հնազանդու-  
թիւն պահանջել գաղթականներից և եթէ չը  
լսէին անյապաղ յառաջ տանել պատերազմը:  
Զօրավարին յայտնի էր Ֆրանկլինի ազդեցու-  
թիւնը ժողովրդի վրայ. ուստի նա մի գլխ գրեց  
նրան, որ զգուշանայ ազգի եռանդը բորբո-  
քելուց:

Ֆրանկլին պատասխանեց. «Ձեր լիշաճ բա-  
րեկամական թղթերն խորհրդարանի տուածնե-  
րից աւելի բան չեն խոստանում մեզ և դրան-  
ցից աւելի նշանակութիւն չունին մեր աչքում:  
Խոստանում էք մեզ ներդրութիւն, եթէ յօժար  
լինինք հասարակութեան: Միայն ձեր գոռոզ, տակա-  
ւին խելքի չեկած ազգին է վայել ներդրու-  
ած առաջարկել վիրաւորուած գաղթականներին:  
Գուք միայն մեր գայլոյթն էք շարժում այս-  
պիսի վարմունքով: Գարձեալ հնազանդինք մի  
պետութեան, որ անգթաբար այրում է մեր  
քաղաքներն ձմեռուայ մէջ, որ մեր արտերն  
արիւնով զանգելու համար մեր դէմ է աղմկում

վայրենիներին, շինականներին և ստրուկներին:  
Սակայն դիցուք թէ կարացաք անլիշաչար լի-  
նել դէպի մեզ. արդեօք կարող ենք նոյնը սպա-  
սել և ձեր ազգից, որ իրեն սաստիկ վիրաւո-  
րուած է համարում: Ոչ. ձեր ազգը պատրաստ  
է ամենաչար բռնութեամբ ընկճել մեր քաջու-  
թիւնն և ի չիք դարձնել մեր բարօրութիւնը:  
Գուք ասում էք, վսեմափայլ տէր, որ թագա-  
ւորը կամենում է յարատեւ խաղաղութիւն և  
սերտ միաբանութիւն հաստատել գաղթական-  
ների հետ: Մենք անշուշտ նախամեծար կհա-  
մարէինք այսպիսի մի խաղաղութիւն, քան թէ  
օտար պետութիւնների գաշնակցութիւնը, մի-  
այն թէ հաւաստի լինէինք, որ դուք պատուէր  
ունիք այս մասին: Քայց երկբայելին էլ հենց  
այս է: Անգլիական ազգը կարող կլինէր հար-  
կաւ նորից գրաւել մեր բարեկամութիւնը, եթէ  
կամենար յետ կանչել ատուած կուտակալներին,  
վերականգնել մեր քանդուած քաղաքներն և  
փոխարինել մեզ հասցրած վնասները. սակայն  
նրա գոռոզութիւնից և անխոհեմութիւնից այս-  
պիսի իմաստուն միջոցներ սպասել չէ կարելի:  
Անգլիացիք, իբրև մի պատերազմասէր, հարըս-  
տահարիչ, բռնակալ և արտօնասէր ազգ, գար-  
ձեալ պիտի նորոզեն իրենց աւերիչ ասպատակ-  
ներն և այնքան զանձ և մարդիկ զոհեն, ինչ-



քան որ վատնած էին Էօթէնի արշաւանքները ժամանակ \*): Պատերազմ հրատարակելով ես է հարկէ երկիւղ չեմ ազդել ձեզ. պատճառ որ Անգլիայում ոչինչ բանի չեն հաւատում, մինչև որ դործի վերջը չտեսնեն»:

Պատերազմը շարունակուեցաւ: Ամերիկացի միացեալ նահանգները համար Վաշինգթօն մի պատուական զօրավար էր, միայն թէ սա պարտաւոր էր հենց պատերազմի ժամանակ զօրք ճարել, մինչդեռ թշնամին արդէն սկսած էր յաղթանակ կանգնել իւր գերազանց և վարժ գնդերով:

Այսու ամենայնիւ քաջասիրտ ամերիկացիք մի վայրկեան անգամ չյարանեցան, այլ վճռեցին — «լաւ է մեռնել դաշտի վրայ ազատութեան համար մարտնչելով, քան թէ վատօրէն խոնարհիլ օրինազանց բռնակալութեան առջև»:

1776 թ. վերջերում Փրանկլին միացեալ նահանգները կողմից դեսպան առաքուեցաւ

\*) Էօթէն մի նշանաւոր աւստրիական զօրավար էր, որ պատերազմում էր նախ Տաճիկները դէմ և ապա Անգլիացի Մարբօրօ զօրավարի գեներալութեամբ՝ Փրանսիայի դէմ Սպանիական ժառանգութեան կռիւներէ ժամանակ 18 դարու սկզբում: Փ. Վ.

Փրանսիա, այս երկրի կառավարութիւնն իւր հայրենիքի հետ մի դաշնակցութեամբ միաւորելու համար: Այս միջոցին յաջողութիւնը դեռ անգլիական զէնքին էր պատկանում և Եւրոպացիք կարծելով, թէ նորագատ նահանգներն իսպառ հոգեվարքի մէջ էին, անխուհեմ էին համարում նրանց հետ դաշնակցելը: «Սակայն Փրանկլին ամբողջ Փրանսիան բորբոքեց և մի նոր ոգի շնչեց այս երկրին: Քաղաքացու հասարակ շորեր հագած, մազերը պարզ սանդղած պատկառելի և իմաստուն ալևորն ասես թէ մի ուրիշ աշխարհից եկած տեսիլքի տպաւորութիւն գործեց Վերսայլի ոսկեգարգ պալատականները շրջանում և մի նոր ժամանակի մարգարէ երևցաւ նրանց աչքին: Պալատի ազնուականները, հենց նրանք, որոնք խրոխտ աչքով էին նայում իրենց Փրանսիական քաղաքացիները վրայ, այժմ մրցում էին իրար հետ մին միւսից աւելի մեծարանք շնորհելու ամերիկացի քաղաքացուն»: — «Այն մտերմութիւնը», գրում էր Փրանկլին մի բարեկամի, «այն յարգանքը, այն սէրը, որ վայելում են այս տեղ ամերիկացիք, սրանք երբէք չեն գտնիլ Անգլիայում»:

Որովհետև քիչ ժամանակից յետոյ ամերիկացի զօրքերն էլ սկսան նշանաւոր յաղթանակներ տանել, այս պատճառով վերջ է վերջոյ

կարելի եղաւ մի յարձակողական և պաշտպանողական և մի առևտրական դաշնակցութիւն հաստատել Ամերիկայի և Ֆրանսիայի մէջ (1778), և ապա թէ Ֆրանկլին թոյլտուութիւն ստացաւ ներկայանալու Լիւզովիկոս ժՋ թագաւորին:

Ահա թէ ինչ է գրում այս մասին Հիլիար դ'Օրէրթօյլը. «Վերջապէս Ֆրանկլին տեսակցութիւն ունեցաւ նորին գերիշխանական մեծութեան հետ: Հետաքրքրութիւնից շարժուելով նրա հետ եկած էին և ուրիշ շատ ամերիկացիք և օտարականք: Փողովրդի ուշադրութիւնը միանգամայն գրաւուած էր ծերունու այլքներով, պատկառելի տեսքով և անպաճոյճ հագուստով: Գափահարութիւններն և քանիցս կրկնուող մտերմական ցոյցերը թարգման էին այն շերմ համակրութեան, որին որ Ֆրանսիացիք բոլոր միւս ազգերից աւելի ընդունակ են և որի հրապուրը նրանք իրենց նուրբ քաղաքավարութեամբ դիտեն առաւել ախորժ և հաճելի անել դրան արժանացող մարդու սրտին: Նորին մեծութիւնը հետևեալ խօսքերն ասաց Ֆրանկլինին. «Վկայեցէք Ամերիկայի միացեալ նահանգներին իմ բարեկամութիւնս և թոյլ տուէք ինձ ասելու, որ ես ի սրտէ գոհ եմ ձեր վարմունքից, քանի որ դուք իմ պետութեանս մէջ էիք»: Այնուհետև երբ Ֆրանկլին արտաքին գործերի նախա-

րարի մօտ գնաց, եռանդագին ողջոյններ ընդունեց ժողովրդից, որ կանգնած էր ճանապարհի վրայ, նրա անցնելուն սպասելով»:

Ֆրանսիայի դաշնակցութեան օգուտն այս էր, որ միացեալ նահանգները սիրտ առին, թշնամիները վհատիլ սկսան և Վաշինգթօնի ռազմական միջոցները շատացան: Սակայն Ֆրանսիայից Ամերիկա ուղարկուած զօրքերը համարեա թէ չմտան պատերազմի մէջ, պատճառ որ ամերիկացիք իրենց արդար գործն իրենց յատուկ քաջութեամբ բարի վախճանի հասցրին:

Անգլիացիք միացեալ նահանգների վրայ նորից իշխանութիւն ձեռք բերելու համար այլ ևս մի անգամ արձակել էին հնդիկ ցեղերին դաղթականների վրայ, սրանց դաշտերն և գիւղերը չարաչար այրելով և ասպատակելով: Սակայն ինչքան էլ կորստաբեր լինէր հիւսիսային Ամերիկայի բնակիչներէ համար այս սարսափելի մոլեգնութիւնը, դարձեալ հետևանք բարի եղաւ: Այժմ ոտքի ելան և այն մարդիկը, որոնք դեռ հաւատարիմ էին մայր երկրին, և զէնքի պիմեցին, որովհետև չէին ուզում այլ ևս հարազատ մնալ մի պետութեան, որ բարբարոս դարերի ամենավայրագ հնարներով էր ձգտում հաստատուն պահել իւր իշխանութիւնը: Ազատութեան համար նահատակուող քաջ ազգի

Համբաւն այնպէս էր տարածուել և այնպիսի վառ համակրութիւն էր գտնում աշխարհիս մէջ, որ ամեն երկիրներէց յօժարակամ զինուորներ էին գալիս Ամերիկա և մտնում Վաշինգթօնի դրօշակի տակ:

Վերջապէս Անգլիայի բազուկը թուլացաւ, և որովհետև էլ չէր կարող մի շահ ստանալ մարդիկ և ասկի զոհելուց, ուստի հարկ համարեց հաշտութեան դաշն կնքել, որ և տեղի գտաւ Փարիզի մէջ 1783 թ. սկզբին: Անգլիան Ամերիկայի Հիւսիսային նահանգների անկախութիւնը ճանաչելով կորցրեց 20,000 քառակուսի մղոն երկիր:

Թ

### ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ֆրանսիկին մինչև այժմ դեսպանական պաշտօն վարելուց յետոյ, կամենում էր վերջապէս յետ կոչուել Փարիզից և հայրենիքի մէջ անցկացնել իւր վերջին օրերը: Թէպէտ նա ճանաչել էր Փարիզի մէջ մի քանի ֆրանսիացիք, որոնք լիակատար պատուի արժանի էին, բայց և այնպէս չէր սիրում այս քաղաքն և կարօ-

տում էր իւր հայրենակիցներին: Սակայն նահանգներէ կառավարութիւնը նրա ֆրանսիա մնայն դեռ անհրաժեշտ համարելով, իսկոյն չկատարեց նրա կամքն, այլ միայն 1785 թ. թող տուաւ նրան վերագառնալ Ֆիլադէլֆիա:

Յագմութիւնը զուարթագին աղաղակներով դիմաւորեց պատկառելի ծերունուն նաւահանդստի մէջ և զանգակների հնչմամբ և ունմբերի որոտմամբ ընդունեց նրան քաղաքում, որ շքեղ պճնուած էր այժմ նրա վերագարձի պատճառով: Այս անց քաղաքն էր, ուր նա մի օր, իբրև տասնութամեայ պատանի, փոթորկալի ծովային ճանապարհից յոգնած, անսյշ քնել էր կուաքէրների աղօթարանի մէջ: Այն ժամանակ նա դեռ չգիտէր իւր ապագայն. բայց նա իւր սրտի ամենալաւ բերմունքներին հետևելով, մամամբ ինքն պատրաստեց այս ապագայն. նա բարի մարտ մղեց և այժմ կարող էր պարծենալ իւր ալևոր հէրքերով: Զատերն արտասովում էին ազնիւ ծերունուն տեսնելիս: «Նրա մուտքը հանդիսաւոր էր», ասում է ականատեսներէց մին. «ուր էլ գնար՝ օրհնենք էր լսում երախտադէտ ժողովրդից: Զինուորները շտապում էին ցոյց տալ նրան անկախութեան պատերազմում ընդունած վէրքերը. ծերուկները փառք էին տալիս Աստուծոյ, որ կենդանի էին

մնացել մինչև նրա վերադարձի օրը. պատանի-  
ները յառաջ էին նետվում դէժ մի անգամ  
տեսնելու այն մարդուն, որի ձիրքերն և գոր-  
ծերը սուրբ ոգևորութեան առաջին բերկրանք  
էին յարուցած նրանց. մատաղ սրտերի մէջ:  
Քաղաք մտնելով նաւահանգստից, որ այժմ բաց  
էր ամեն ազգերի համար, նա տեսաւ իւր հիմ-  
նած ժողովրդական ուսումնարանը, որ բողբո-  
ջում էր, և հիւանդանոցը — իւր հոգսերի առա-  
ջին առարկան, որ նոյնպէս ամենալաւ վիճակի  
մէջ էր»:

Այժմ ութսունմէկ տարեկան էր Փրանկլին.  
սակայն կրօնալուէինք, եթէ կարճէինք, թէ  
նա այսքան աշխատանքից լետոյ վերջապէս  
հանդիստ առնել կուզենար: «Գեռ կունենանք  
հանգչելու ժամանակ, երբոր աչքերս փակուին»,  
ասում էր նա, և սա մի դատարկ խօսք չէր,  
այլ սրտի խորքից ելած մի համոզմունք: Ինչ-  
քան էլ ազդէին նրա մարմնի վրայ բնութեան  
անյեղլի օրէնքները, դարձեալ նա կանգուն էր  
մնում որպէս մի ծառ, որի բունը թէև արդէն  
քայքայուած է, բայց ինքն դեռ ոստ է տալիս  
և պտուղ:

Փրանկլին կառավարութեան ամենաբարձր  
ատեանի անգամ ընտրուեցաւ և փոքր ինչ լե-  
տոյ նոյն ատեանի նախագահ: Նրա հաստա-

տած հիմնարկութիւններն այժմս էլ առատ օ-  
ժանդակութիւն էին ստանում նրանից: Նրան  
նախագահ ընտրեցին և երկու մեծ ընկերու-  
թիւններ, որոնցից մին բանտերի վերակազմու-  
թեան էր նուիրուած, միւսը՝ ստրուկների ազա-  
տութեան. և այսպէս նրա ձեռքերը միշտ լիքն  
էին զործով և մանուկ սերունդը կարող էր ու-  
սանել ձերուսուց, թէ ինչ կնշանակէ անձանձ-  
րոյթ աշխատելն և զործելը:

Նրա Ֆիլադելֆիա մտնելուց երկու տարի  
լետոյ՝ այս քաղաքի մէջ իսկ գումարուած ազ-  
գային ժողովը — Կոնգրէսը — վերստին քննու-  
թեան ենթարկեց ազմկալի պատերազմի ժամա-  
նակ ծագած բնդհանուր սահմանադրութիւնն և  
նորից վաւերացրեց սրան: Այս հանգիսի պատ-  
ճառով հաւաքուած ահագին բազմութեան մէջ  
դարձեալ մի անգամ խօսեց իմաստուն ձերու-  
նին: Փողովի վճուրց ամենքը դու՛հ չէին. անմիա-  
բանութեան չար ոգին արդէն սկսել էր զըր-  
զըռել անգամների սիրտը. այն ժամանակ ոտքի  
ելաւ Փրանկլին և հետեւեալ խօսքերն ասաց  
ստորագրութիւն տալուց առաջ.

«Ես ընդունում եմ այս սահմանադրու-  
թիւնը թերութիւններովն հանդերձ, եթէ ու-  
նենար էլ այսպիսիք. պատճառ համոզուած եմ,  
որ մեզ անհրաժեշտ է կառավարութեան մի

ձև, և աներկբայ եմ, որ ամեն ինչ կառավար-  
չական ձև լաւ է, եթէ լաւ զործադրուի: Աներկ-  
բայ եմ նոյնպէս, որ մեր սահմանադրութիւնը  
լաւ կպահպանուի մի քանի տարի և բռնակա-  
լութեան տեղիք չի տալ, միայն թէ ազգի  
ապականութիւնն այս չպահանջէր: Չեմ կար-  
ծում, որ մի ուրիշ սր և է ժողով սրանից լաւ  
սահմանադրութիւն կարանար հաստատել. վասն  
զի երբոր շատ մարդիկ են հաւաքվում միացեալ  
կարծիքներից օգտուելու համար, — հաւաքվում  
են նոյնպէս և նրանց նախապաշարումները,  
կիրքերն և տեղական մասնաւոր շահերը, և  
անհնարին է դառնում յառաջացնել մի կատա-  
րեալ զործ: Ես զարմանում եմ մինչև անգամ,  
որ յաջողեցանք այսքան մօտենալ կատարելու-  
թեան, և գուցէ թշնամիներն անգամ կզար-  
մանան, պատճառ որ նրանք ուրիշ բան չէին  
սպասում մեր նիստերից, եթէ ոչ աշտարակաշի-  
նութեան հետեանքը, և վստահ էին, թէ նա-  
հանգներն էլ երբէք չէին մօտենալ իրարու,  
բայց թէ միմեանց սրտի մէջ դաշոյն միելու  
համար: Արդ, ես տալիս եմ իմ քուէն, քանզի  
մի առաւել ընտիր սահմանադրութեան յոյս  
չունիմ, և մասնաւոր միտքերս զոհ եմ բերում  
ընդհանուր օգտին: Ատեանիցս դուրս նրա վրայ  
բան չեմ խօսած և կ'ողգէի, որ ինչ որ խօ-

սուեցաւ այս յարկիս տակ, մեր մէջ մնար: Եթէ  
ամեն մի անգամ տուն վերադառնալիս կամե-  
նալ մի առ մի պատմել ընտրողներին, ինչ որ  
ասուեցաւ մեր մէջ, այն ժամանակ կարող է  
պատահել, որ սահմանադրութիւնը մի ընդհա-  
նուր վարկ չգտնէ և այսպիսով ի չիք դառնայ  
այն բարի ներգործութիւնը, որ ծագելու էր մեր  
իրական կամ երևութական միաբանութիւնից  
թէ մեր և թէ օտար երկիրների նկատմամբ:  
Մի որ և է կառավարութիւն այն ժամանակ  
միայն կարող է յառաջ տանել ազգի բախտը,  
երբ ազգը կատարեալ վստահութիւն ունի  
նրա բարելաւութեան և կառավարիչների ուղ-  
ղամիտ ազնուութեան վրայ. այս պատճառով ես  
կամենում եմ թէ մեր և թէ գալոց սերունդ-  
ների օգտի համար, որ ամենքս միաբան փա-  
րուինք այս սահմանադրութեան, ամեն տեղ  
քարոզենք սրան և ամեն ներելի միջոց և ջանք  
ի զործ դնենք սրա շուտափոյթ ընդունելու-  
թեան համար: Սրտիս ամենաջերմ փափագն  
թեան համար է, որ ժողովիս ան-  
ամեն բանից առաջ այս է, որ ժողովիս ան-  
գամներից ամեն մին, որ գուցէ դեռ մի քանի  
բան ունէր ասելու մեր դէմ, շատ հաւատ չըն-  
ծալէր իւր անսխալականութեան և իսկոյն  
ձեռք դնէր այս թղթի տակ՝ ի նշան միաբա-  
նութեան»:

Զուր չխօսեց ձերունին. բոլորն էլ թուղթը ստորագրեցին. այնուհետև սահմանադրութեան պատճէնը միացեալ նահանգների բնակչաց քուէարկութեան ենթարկուեցաւ և, ընդհանուր հաւանութիւն գտնելով, հիմնական օրէնք դարձաւ:

Մի տարի անցնելուց յետոյ՝ միացեալ նահանգների պատգամաւորները ձայների միութեամբ հասարակապետութեան նախագահ ընտրեցին Վաշինգթօն զօրապետին: Ֆրանկլին ի բոլոր սրտէ ուրախանում էր տեսնելով, որ իրերի նոր կարգը քաջ առ քաջ ամրանում էր Վաշինգթօնի խոհեմ և հաստատ վարչութեան ներքև: Եւ ինչպէս չ'ուրախանար. նրանից քսանվեց տարիով կրտսեր Վաշինգթօնը միթէ նրա ամենաջերմ աշակերտը չէր, որ ամենայն փութով օժանդակել էր վարժապետի կէս դարէ ի վեր բանիւ և գործով քարոզած ճշմարիտ մտքերի յաղթանակին:

Վերջապէս հասաւ ժամանակն, երբ Ֆրանկլինի պէս մարդու կեանքն էլ պիտի մարեր: Նա չափաւոր կեանք վարելով, կարացել էր մինչև ութսուներկու տարեկան հասակը պահպանել իւր հօր առողջութիւնը, որ բնութեան մը ճիրքն էր. այնուհետև վրայ հասան պէսպէս հիւանդութիւններ և ստիպեցին որ նա

անկողին մտնի: Քաջ ցաւելի մահճի մէջ անգամ նա օգնում էր ուրիշներին խորհրդով, և նրան այցելողները զուարթ սրտով էին հեռանում նրանից:

Նա տուաւ բարեկամներին յետագայ տապանագիրն, որ ինքն էր շարագրած իւր համար լիսուն տարի առաջ.

Այս տեղ ննջում է,

Իբրև սողունների կերակուր,

Մարմինը

Գիր տպող

Յենեամին Ֆրանկլինի —

Նման տուփին հին մատենի,

Որի միջից թերթերը քաղուած են,

Կազմը մաշուած:

Սակայն շարագրութիւնը չի կորչել,

Այլ վերստին լոյս կտեսնէ, այս է նրա յօսը,

Նոր տպագրութեամբ,

Ուղղած և բարւոքած

Աջովն

ՆԵՂՆՆԱԿԻ:

Այս հաւատը գէպի զերագոյն Ին և հոգու անմահութիւնը հողեղէն կեանքից յետոյ՝ այժմս էլ վառ էր նրա սրտի մէջ և արտայայտվում էր ոգելից բառերով:

Նրան կտակած գումարի մի մասն որոշուած

էր այն վարժարանի համար, ուր որ նա ինքն սկզբնական ուսում էր առած, — միւս մասն՝ մի ջրմուղ նաւարկելի շինելու համար և վերջապէս երրորդ մասն՝ Բոստօն և Ֆիլադելֆիա քաղաքների արհեստաւոր աշակերտների կրթութեան համար. իսկ դեռ ստանալիք պարտքերի մուրհակները կտակուած էին Ֆիլադելֆիայի հիւանդանոցին:

Աւանդագրի վերջին խօսքերն էին, «Վայրի խնձորենուց շինուած զբօսնելու գաւազանս՝ ազատութեան գլխարկի նման սիրուն կոթոյք, թողնում եմ Վաշինգթօն գօրայեւտին — իմ և մարդկութեան բարեկամին: Եթէ այս գաւազանը մի արքայական գալիստն անգամ լինէր, դարձեալ նա արժանի էր սրան ստանալու, և կըստանար»:

Հանգիստ հոգևով սպասեց Փրանկլին յետին ըոպէին և իւր միտքը մինչև վերջին օրը պարզ պահեց: Մահը կնքեց նրա աչքերը 1790 թ. Ապրիլի 17, երեկոյեան 11 ժամին:

Ամերիկան դեռ չէր տեսած նրա թաղման պէս հանդիսաւոր թաղումն: Ֆիլադելֆիայի բնակիչները սև հագան, զանգակները տրտում հնչեցին, տանիքներից սև դրօշակներ պարզուեցան, լրագիրները սև շրջանակ զգեցան և Կօնգրէսի հրամանով բոլոր Միացեալ Նահանգ-

ների վրայ երկու ամսուայ սուգ գրուեցաւ:

Միւս երկիրներն էլ խոր տրտմութիւն զգացին նրա մահուան գոյժը լսելիս: Փրանսիական Օրէնսդրական ժողովի մէջ Միրաբօն այսպիսի արտայայտութիւն տուաւ ընդհանուր վշտին.

«Փրանկլին մեռած է: (Խոր լուսթիւն ժողովի մէջ:) Աստուածութեան գիրկը վերադարձաւ այն ոգին, որ ազատութիւն էր շնորհել Ամերիկային և լուսոյ հասանք էր շողում բոլոր Եւրոպայի վրայ:

«Կօնգրէսն երկու ամսուայ սուգ է գրել բոլոր Միացեալ Նահանգների մէջ, և Ամերիկան այսպէս է վճարում հիացման և պատու պարտքն իւր ազատ սահմանադրութեան հիմնարկուններից մէկին»:

«Ո՛վ օրէնսդիրք. արդեօք արժանի չէ՞, որ դուք էլ միանայիք այս կրօնական զործին և ի տես աշխարհի մասնակից լինելիք այն փառաբանութեան, որ ընծայվում է այս օր մարդկային իրաւունքները քարոզող և սրանց իշխանութիւնն աշխարհիս մէջ տարածող փելիսփային»:

«Հեթանոսական հին աշխարհը բազիններ կրկանգներ անշուշտ այս մահկանացուի համար, որ իւր վսեմ մտքի զօրութեամբ երկիր և

երկինք ըմբռնեց — բռնակալութիւնն և շանթը  
յօզուտ մարդկութեան սանձահարեց:

«Առսաւորուած և ազատ Եւրոպան պար-  
տական է արտայայտել իւր վիշտը փլիխոփա-  
լութեան և ազատութեան համար երբ և է  
ապրած ամենամեծ մարդիկներից մէկին և լի-  
շել նրա անունը:

«Աստի առաջարկում եմ Ազգային ժողո-  
վին՝ վճիռ հաստատել երեք օրուայ սուղ պա-  
հելու Բենիամին Փրանկլինի համար»:

Միրաբօյի առաջարկութիւնը միաձայն ըն-  
դունուեցաւ:

Մենք էլ կանգնած ենք մտքով անմահ  
հանգուցեալի աճիւնի առջև. մեր սիրտն էլ  
լի է հիացմամբ դէպի նա:



0005583  
0005584  
0005585  
0005586  
0005587

ՀՀ Ազգային գրադարան



NL0005583

ՀՀ Ազգային գրադարան



NL0005584

ՀՀ Ազգային գրադարան



NL0005585

ՀՀ Ազգային գրադարան



NL0005586

ՀՀ Ազգային գրադարան



NL0005587

1182  
1183  
1184  
1185  
1186

2013

